

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵՐ ԴԷՄԻՆԸ

Շարունակելով այն յօդուածները որոնց միջոցաւ մեր ընթերցողներուն ծանօթացնել առաջադրած էինք օսման հան կայսրութեան նկատմամբ Եւրոպայի արդի տրամադրութիւնները, միանգամայն՝ թիւրքիոյ քաղաքական կուսակցութիւնները և անոնց վարիչները, կուզանք կը հասնինք երկրին միակեծան պետին անձնաւորութեանը:

«Օսմանեան կայսրութիւն» բացատրութեամբ մի այն և միմիայն սուլթան Համիտը կը հասկցուի այսօր թիւրքիոյ միապետը ո՛չ Անգլիոյ Թագուհիին պէս նախարարութեան մը որոշումներուն լոկ վերհսկողն է, ո՛չ ալ Ռուսիոյ Չարին նման ճշուած կը մնայ անպաշտօն բարձրագոյն մարմնի մը ազդեցութեանը ներքի: Սուլթանը բացարձակապէս իր կամքովը կը կառավարէ:

Սուլթան Համիտի կառավարելու եղանակը երբ աչքերնուս առնել պատկերացնելով խորհինք, դիւրաւ կ'ըմբռնենք թէ թիւրքիոյ միակեծան իշխանին գլխուն մէջ տարադնած ուղեղ մը զետեղուած չէ: Դէմերնիս ունինք զրական, ինքնաշնորհ միտք մը որ մէթօտով կը գործէ: Դէպքերու տպաւորութեան ներքև հապճեպով որոշում չի տալ: Ծանրակշիռ հետազոտներու սահմանեալ ամէն գործի յետ երկարժամանակեայ պատրաստութեանց կը ձեռնարկէ: Ճակատագրին զօրութեանը հաւատացող կըրօնքի մը խալիֆը կը ջանայ որչափ որ հնարաւոր է չափաւորել, տկարացնել զիպուածին ազդեցութիւնը:

Երբ 1876 օգոստոս 19/31 ին Համիտ էֆէնտին սուլթան հռչակուեցաւ, կայսրութեան ամբողջ իշխանութիւնը իր ափին մէջ առնելու որոշումը տուաւ: Նոր սուլթանը գահը ելած պահուն զրեթէ անուանական միապետ մըն էր, կայսրութեան գերագոյն իշխանութիւնը Պապը Ալին կը կեդրոնանար: Սուլթան Համիտ զգաց թէ պարզապէս խնամակալներու հսկողութեան ներքև կը զրտնուէր: Երկրին իրական տիրուտանքը Միտհատ փաշա եւ պաշտօնակիցները կը համարուէին: Այդ երեոնամենի անփորձ երիտասարդը այն բոլոր Միտհատ, Բուշտի,

Հիւսէին Ալին, Բէտիֆ, Քայսերի Ահմետ կոչուած հին ատուրց նախարարները կատարեց, փչրեց «որպէս զանօթ բրտի»: Վերցուց նետեց զինքը կաշկանգող Մաքժանապրութիւնը, և սուլթաններու բացարձակ տիրաւորութեան իրաւունքը վերահաստատեց:

Ինքնագլուխ կառավարելու որոշումը տուած պահուն սուլթանը ըմբռնած էր թէ նոյն իսկ միակեծան պետի մը համար ալ զօրութեան եւ անկախութեան ապահովագոյն երաշխաւորութիւնը զրամական ուժի մէջ կը կայանայ, ուստի երբ իր փաշաներէն քաղաքականապէս անկախ ըլլալ ուզեց, ուզեց նաև ազատիլ պետական գանձուն հպատակութեանը հարկէն ալ: Այս նպատակաւ սուլթան Համիտ իր սնձական գանձը բարեկարգելու անմիջական պէտքը զգաց: Գտնել Գազազեան Յակոբ էֆէնտին, եւ զայն իր մասնաւոր գանձուն նախարարը անուանեց: Այդ օրէն սուլթանը հիմնեց իր անձնական մեծ հարստութիւնը որուն շնորհիւր անկախօրէն կը թագաւորէ, երկրին ելմտական տագնապներէն առանց երբեք ինքը վշտանգուելու:

Սուլթանը անգամ մը որ կառավարութեան բացարձակ իշխանութիւնը ստանձնեց, երկրին վաճառական բարձր պաշտօնէութիւնը Երկու մասի բաժնելով, մէկը Պապը-Ալին գետեղեց, միւրը՝ Երլտգը: Դուրը նստող նախարարներուն իշխանութիւնը Երլտգէն հաղորդուած հրամաններուն զորձագրութեանը մէջ սահմանափակուեցաւ: Այդ պաշտօնին համար առաջնակարգ յատկութիւններով օժտուած անձնաւորութեանց անհրաժեշտ պէտք չի կար իսկ երկրին վարչական կեդրոնը Երլտգ հաստատուած ըլլալով, սուլթանը իր շուրջը բաւական արժանիք ունեցող մասնագէտներ բոլորեց: Շատ սխալ տեղեկութիւն մըն է, զոր տարւածելու գլխաւորապէս Երիտասարդ թիւրքիոյ հետաժողովան, թէ սուլթանը անընդունակ, սովալուկ բաղդախնդիրներու վտնակէ մը միայն շրջապատուած է: Նաև առտոյցը մըն է թէ, սուլթանը մինչև իսկ ծանրակշիռ կարեւորութիւն ունեցող խնդիրներու համար անգամ տրամաք եւ սոգէտ անձերու խորհրդին կը դիմէ: Ընդհակառակը, թիւրքիոյ միապետը երբ կարծիք մը լսել ուզէ, միշտ մասնագէտին հրաւեր կը կարգայ:

Ո՞ք արդարեւ Երլտգը պաշտօնավարողը ամէն անձ իր մասնագիտական ճիւղին մէջ յատուկ արժանիքի տէր է:

Օրինակներ: Անձնական գանձուն նախարարութիւնը յանձնուած էր Յակոբ փաշային, որուն յաջորդեց Միքայէ ֆորթուզալ փաշա, ընդունակ տնտեսագէտ—մատակարար մը: Փորթուզալ փաշային տեղը անցաւ Սապօ Յովհաննէս Էֆէնտի, որ իր նախորդներուն գործը միևնոյն յաջողութեամբ կը շարունակէ մինչև հիմակ: Յոյն մը՝ Գարաթէոտորի փաշա, առաջին թարգմանի, և հայ մը՝ Սէֆերեան Էֆէնտի երկրորդ թարգմանի պաշտօնները կը վարեն, որովհետեւ երկուքն ալ թէ՛ օտար լեզուներ և թէ՛ թիւրքերէնը քաջ գիտեն: Առաջին քարտուղարը թահօին պէն է. սուր յիշողութեան տէր, կարգի կոնոնի յարեալ, անխոնջ աշխատող անձ մը: Ուրիշ երկու իսլամ ալ, իրզէթ պէ և Շէյխ Էպիւ Հիւտա քաղաքական խորհրդատուներու մէջ են: Առաջինը՝ խելացի սուրիացի մըն է. երկրորդը՝ իսլամական աշխարհին մէջ ազդեցիկ Երլտգի բոլոր պաշտօնեաները, ինչ կրօնքի և ինչ ցեղի ալ պատկանին, օսմանեան հպատակ ըլլան թէ օտարական, ամէնքն ալ զանազան ընդունակութիւններով օժտուած մտքեր են:

Այսպէս ահա սուլթան Համիտ Երլտգին մէջ հաստատած է վարչական կազմակերպութիւն մը որ իրեն հընարաւոր կ'ընծայէ պետութեան բոլոր գործերը ամէն բոպէ աչքերուն առջև ունենալով, ամէնուն հսկել, ամէնուն հասնիլ միակ հրամանատարութեամբ մը:

Սուլթանին քսանհինգամեայ իշխանութեան պատմութիւնը կը հաստատէ թէ թիւրքի կառավարող միապետը խելացիոր յիմար մը չէ, այլ՝ կը գործէ որս ռոզութեամբ, ու յարատեւել զիտէ:

Առանց շատ նեղուելու այս ճշմարտութիւնը կրնանք խոստովանիլ, վասն զի մենք հայերս ալ գործնականապէս ցոյց կուտանք որ մենք ալ թէ՛ կամք ունինք թէ՛ յարատեւել զիտենք: Իրաւ է որ շատ յուսախաբութեանց մատնուեցանք, բայց պարտութիւնը տակաւին առ դուռն չէ մեզի: Ու կը հաւատանք որ այսուհետև աւելի զօրութիւն պիտի գզենունք, վասն զի առանց բորբոքման կուզենք կուրիլ եւ պաշտպանել մեր դատը:

Մեր պահանջումներուն մէջ մեր յարատեւութիւնը անհերքելի ապացոյց մըն է թէ մեր դժգոհութիւնը անցողական գէպքերու հետևանք չէ: Յետ տասը տարուան սգօրման, յետ այնքան օարօսափելի աղէտներու, հայ ժողովուրդը աւելի քան երբեք ուժգնօրէն կը շարունակէ իր դատին պաշտպանութիւնը, առանց տկարանալու: Կուրի մը մէջ ով որ նախ կը սկսի ձանձրանալ եւ թօւնալ, անիկայ արդէն յաղթուած կը համարուի:

Առաջ տանելով մեր դատին պաշտպանութիւնը մենք չենք մօտնար օակայն թէ մեր գործը նախ եւ առաջ երկրին իշխանութեան հետ է. ու այդ իշխանութիւնն ալ կը մարմնանայ սուլթանին անձնատրութեանը մէջ: Հակառակօրդի մը զօրաւոր կողմերը, այսինքն՝ արժանիքները, իօրապէս ճանչնալու է, որպէս զի սխալելով վերջէն չա-

րաչար շտուժներ: Թշնամիի մը յատկութիւնները խոշոբացոյցով զիտելու մէջ օ՛ր և է ֆլաւ չի կայ, վասն զի որքան աւելի մեծ գաղափար մը կազմենք մեր ընդդիմամարտներուն կարողութեանցը վրայ մենք ալ այնքան աւելի զօրեղապէս կը պատրաստուինք: Շատ վտանգաւոր է սակայն միևնոյն խոշորացոյցովը զիտել թշնամիին թերութիւնները: Անոնք որ ընդդիմադիրներու զօրութիւնը ճշգրտապէս չափած չեն, անոնք միշտ չարաչար զղացած են կուրի գաշտին վրայ: Այս ճշմարտութիւնը ապացուցանող էն զօրեղ փաստը Անկլո-Պօլերեան պատերազմը հայթայթեց: Ու երբ շատ մեծ պետութիւն մը, որպիսին է Անգլիան, պզտիկ իշխանութեան մը նիւթական ուժը եւ բարոյական զօրութիւնը անգիտանալուն պատճառաւ մինչև իսկ իր գոյութիւնը վտանգօղ փորձանքի հանդիպեցաւ, դժուար չէ մտաբերել թէ որպիսի աղէտներ կըրնան տեղալ պզտիկ ժողովուրդներու զլիւն երբ անոնք չուզեն որոշ գաղափար մը կազմել իրենց գէմը կանգնող մեծ պետութեանց ուժերուն վրայ:

Մեզի համար ա՛լ ժամանակը հասած է որ ճշգրտասէր մտքով քննենք ամէն անոնք որոնց հետ կամ իբր բարեկամ, կամ իբր հակառակօրդ գործ ունինք մեր ազգային դատին համար: Անցեալին մէջ ո՛չ մեզի բարեկամ երեցողները կըրցինք լաւ ճանչնալ, ո՛չ ալ մեզի հակառակօրդ հանդիսացողները: Այս սխալումը որ մասամբ մեր անփորձութեան հետևանքն էր, շատ աղէտներ պատճառեց մեզի: Եթէ նուազ տոկոսն ցեղ մը եղած ըլլայինք արդէն շատոնց յուսահատութեան անձնատուր եղած էինք: Բայց մենք այն ժողովուրդն ենք որ դարբրէ հետէ կը վերաշինէ իր տունը, զոր դարբրէ հետէ բարբարիկ ձեռքերն ալ միշտ կը կործանեն ու կը կործանեն: Մենք յուսահատիլ չենք գիտեր, ուստի կ'ապրինք: Նօրէն պիտի վերականգնենք մեր տունը, և այս անգամ ամուր հիմերու վրայ: Չանանք մեր բարեկամները լաւ ուսումնասիրել բայց աւելի լաւ ուսումնասիրենք մեր հակառակօրդները: Կամաւոր կուրութիւնը անխուսափելի պտրտութիւն կը բերէ իր հետ:

“ԲՐՕ ԱՐՄԷՆԻԱ”

« Հայաստանի համար »

Այս վերնագիրը կը կրէ Ֆրանսերէն կիսամեայ հանդէսը որ սկսած է հրատարակուիլ Բարիդ, Պ. Բիէր ֆիլեհարի անօրինութեան ներքեւ, եւ որուն « խմբագրական ժողով »ը կը կազմեն Գլէմանսօ, Անադոլ Ֆրանս, Ժոսէ, Ֆ. սը Բրէսանտէ, և Է. սը Բոպլըրի :

Պ. ֆիլեհար անձանօթ մը չէ մեր ընթերցողներուն : Զարգերէն անմիջապէս ետքը, ինք առաջիններէն եղաւ որ սկսան Ֆրանսայի հանրային կարծիքը յուզել հայկական հարցով, և մինչ ուրիշներ, ժամանակին հետ, թիչ թիչ կը հրատարակէ պայքարէն, ինք մինչեւ այսօր, առիտ օրուան խանդով ու կորովով, կը շարունակէ Ֆրանսայի յիշեցնել իր պարտականութեանց շարքը և մեր աղէտներուն ահագնութիւնը : Հայասեր շարժումն էն խորին և համազուտ ակոյեաններէն մին է ինքը : Կը ճանչնայ մեր ցեղը, մեր մէջը ապրած է— մասնաւորապէս իբր ուսուցիչ Կ. Պոլսոյ կեդրոնական վարժարանին— և հայկական հարցին բոլոր պարագաները ուսումնասիրած է :

Թերթին ճարտուղարն է Պ. Ժան Լանկէ, նմանապէս ծանօթ իր հայասեր յօդուածներով և մանաւանդ իր Ֆրանսերէն թարգմանութեամբը կանսնիկօ Մաք Բալին հայկապ գրքին :

Խմբագրութիւնը հետեւեալ յայտագրով կը ներկայանայ մեզի իր առաջին թիւին մէջ :

« 1894ի, 95ի, 96ի մեծ շարդերը, որոնք սուլթան Ապտիւլ Համիտի հրամանով կատարուեցան և երեք հարիւր հազարէն աւելի զոհ տարին, հազիւ կը սկսին Եւրոպայի մէջ ճանչցուիլ իրենց բոլոր մանրամասնութիւններովը. և թէպէտ այնքան նոր, արդէն մոռցուած եւ պատմական աղէտքներու կարգը լքուած պիտի ըլլային եթէ կարճ յիշողութիւնն օւնեցող դիւանագէտներու խորհուրդներուն անսայինք :

« Սակայն անկից ի վեր հայկական ցեղին կանոնաւոր բնաշնչումը առաջ կը տարուի աւելի յամր, բայց նոյնքան ապահով միջոցներով. եւ տիեզերական վատութեան առջեւ, առաջին օճիրներուն հեղինակը կը մտածէ լրացնել իր գործը, և նորէն օպաննութեան, կողպուտի, բանաբարութեան ու հրդեհի մատնել Անաստուն :

« Ֆրանսայի եւ օտար ականաւոր աշխատակիցներու աշակցութեամբ, մատնանիչ պիտի ընենք գործուած խժովութիւնները, և, անձանձիւր Եւրոպայի պիտի յիշեցնենք թէ զաշնագրերով իրաւունքներ օւնի ի գործ դնելու Մեծ Մարդասպանին դէմ, պարտքեր օւնի կատարելու աչոր խելագարութեան զօհերուն հանդէպ :

« Մեր ընկիւղը՝ խաչակրութեան ոգին արթնցնել չէ՛, ո՛չ ալ ատելութիւն զրգով օժտանեան հողին վրայ ապրող կամ դաւանուող այս ու այն ցեղին կամ կրօնքին դէմ :

« Բայց եթէ պատրաստ ենք քողազերծ ընելու սուլթանին բոլոր օճիրները ընդգէմ իւրաքանչիւր ժողովրդին որ չար բաղդէն իրեն հպատակ կը գանուի, աւելի մասնաւորապէս մեր ուշադրութիւնը պիտի նուիրենք հայկական տառապանքներուն :

« Որովհետեւ անհունապէս կը գերազանցեն բոլոր միւսները :

« Որովհետեւ ասիկա մահու եւ կենաց անմիջական խնդիր մըն է ցեղի մը համար որ ամէնէն խելացիներէն է եւ արեւմտեան քաղաքակրթութիւնը ընելու յարմար :

« Որովհետեւ, գործնականապէս, Եւրոպա Պերլինի զաշնագրով պէտք եղած զէնքը ունի վերջ տալու այդ արհաւիրքներուն և այդպէս պատրաստելու ամբողջ Թիւրքիոյ վերածնութիւնը : »

Առաջին յօդուածը Պ. ֆիլեհարէն է : Հայկական խնդրին 1894էն ի վեր գտած ծաւալումը կը նկարագրէ պաշտօնագրերու կոթնած, կը յիշէ շարդերը և պաշտօնական տեղեկագիրներուն եզրակացութիւնները, և ցոյց կուտայ թէ ինչպէս պետութիւնները, որոնք աշխարհի առջև հանդիսաւորապէս պարտականութիւն ստանձնած էին Հայաստանը պաշտպանելու, զայն իր դահիճին ձեռքը թողուցին :

Պ. ֆիլեհար կոչում կ'ընէ սրտի տէր բոլոր մարդերուն իրենց միանալու և հայկական հարցը յուզելու : « Նոր տաղանապ մը մօտալուտ է. մենէ կախում օւնի թերեւս առաջըր աննել, կամ գոնէ մինչեւ վերջը հորիզոնին չորս ծագերը արձակել մեր անձկութեան ու աննուաճելի յոյսի աղաղակը. որովհետեւ հայ ցեղը, դարէ գար կատորուած, կարծես խորհրդաւոր կենսականութեամբ մը օժտուած է : » Պ. ֆիլեհար կը յիշէ Գրիգոր Լուսաւորիչի աւանդութիւնը, անոր կեանքին տեւողութիւնը՝ այնքան չարշարանքներ յետոյ : « Սյդպէս ալ դարերու ընթացքին մէջ, Հայաստան, միշտ շարշարուած, միշտ ապրած է. պիտի չըսուի որ այս ժամանակին մարդիկը, որոնք իրենք զիրենք քաղաքակիրթ կ'անուանեն, թողուցին որ ան աշխարհիս երեսէն անհետանայ, և մեղսակիցները եղան Սուլթան Ապտիւլ Համիտի եւ եւրոպական կառավարութեանց : »

Պ. Գլէմանսոյի յօդուածը, « Արիւնոտ Չեռքը » գատապարտութիւնն է մեր ժամանակին, որուն յատկանիշն է ուժին յաղթանակը, գաղափարին պարտութիւնը : Ամբողջ քաղաքակրթութիւնը այսօր կը յանգի կոտորածի անհուն կազմակերպութեան մը : Ամէն պետութիւններն ալ իրար կ'արժեն : Պ. Գլէմանսօ մասնաւորապէս իր մտրակող հեզնութեան թիրախ կ'առնէ Ֆրանսայի Երեւոփոխանական ժողովին նախագահ Պ. Տէչանկը, որ այս

ամառ Պոլիս երթալով չամչցաւ սուլթանին ներկայանալով իր մեծարանքները մատուցանելու և անսր արինուտ ձեռքէն իր ցածութեան վարձքը առնելու պատուանշանով ու պարզեներով:

Երբնոց յօգուածը Պ. տը Բրէտանսէինն է, «Չարր ու Հայերը», և մատնանքը կ'ընէ Ռուսիոյ հակահայկական քաղաքականութիւնը: Պ. տը Բրէտանսէ կը յիշէ Անգլիացի ուղեւորի մը, Մարք Սայքզի վերջերս հրատարակած մէկ գիրքը, «Օսմանեան հինդ նահանգներու մէջէ», որուն մէջ զանց կ'ընէ տեղացի ժողովրդին վիճակին վրայ խօսիլ, պատրուակելով թէ Հայերուն նկատմամբ ունեցած «տտելութիւնը եւ արհամարհանքը» այնքան ուժգին են որ իրեն թող չեն իտար անկողմնակալութեամբ խօսիլ այդ նիւթին վրայ:

«Պ. Մարք Սայքզ ուրիշներէ աւելի անկեղձ է, կը գոչէ Պ. տը Բրէտանսէ: Հակառակ վերջին տարիներու դէպքերուն, հակառակ Կապոյտ ու Դեղին Գլքերուն եւ ուրիշ պաշտօնական հրատարակութեանց որոնք ամբողջ ժողովրդի մը մարտիրոսացումը տրձանագրեցին, զեռ քաղաքակիրթ մարդիկ կան որոնք անսահման առեւտրութիւն մը ունենալ կը կեղծեն զոհերուն դէմ:»

Ռուսիա վարչական հալածանք մը սկսած է իր հայ հպատակներուն դէմ, զորոնք պաշտպանելու էր եթէ ոչ մարդկային զգացումներէ մղուած, գոնէ քաղաքական շահու տեսակէտով: Գօլիցիին իշխանին գաղտնի տեղեկագիրը ամբաստանագիր մըն է ընդդէմ Հայերուն որոնց կը վերագրէ անհաւատարմութիւն և յեղափոխական ու հակառու ձգտումներ: Ի զուր յանձնախումբ մը, որուն կանգամակցէր Ռիտիոսքի իշխանը, տեղին վրայ ուսումնասիրեց այդ ամբաստանութիւնները և հերքեց զանոնք՝ ներքին գործերու նախորդ նախարան Կորէմքիսի ուղղուած տեղեկագրով մը: Ոչ մէկ բան զօրեց համաշխարհային եւ յետագիմութեան շարաշուք քաղաքական նպատեան դէմ որ, Բելոսիայէն ու Պալթիկեան նահանգներէն յետոյ, այսօր ալ Ֆինլանտան ճգմելու վրայ է: Ռուսական Հայաստանը, որ Լազարէֆի, Լորիս-Մելիքեֆի, Տեր-Ղուկասոֆի եւ Եւլիոնիկովի պէս պետական մարդիկ ու զօրավարներ տուաւ Չարին, կասկածելի ու գրեթէ շքեղ տա երկրի մը պէս կը նկատուի: Յաջորդաբար, ամէնէն քմահաճ անօրինութիւնները ձեռք կ'առնուի:»

Ու Պ. տը Բրէտանսէ, յիշելէ յետոյ հայ վարժարաններուն փակումը, Բարեգործական և Հրատարակչական շնչկերութեանց շնչումը, կ'ըսէ:

«Անցումը ու արմար բնաւորութիւն մըն է արեւմտեան Ահա ինչ որ սուրբ Ռուսիան կուտայ ֆրիստոնեայ Հայ յանձնաժողով: Իրաւ որ, Սուլթանին եւ Չարին միջև — «սատանային և ծովուն անդունդին միջև» ինչպէ՞մ կ'ըսեն Անգլիացիները — Հայերը ուրիշ բանի վրայ յոյս գնելու չեն թայ՞ց եթէ իրենց իրենց վրայ, իրենց կազմակերպութեան, իրենց ժիւ ջանքերուն եւ ամբողջ աշխարհի մէջ արդա-

րութեան եւ Յեղափոխութեան կուսակիցներու համակրանքին վրայ:»

Չորրորդ եւ վերջին յօդուածը նուիրուած է այն բոլոր հայասէր ցոյցերուն որոնք կատարուեցան Բարիլ Յուր Կեանք երկարօրէն խօսեցաւ:

Արեւելքի յատուկ լուրերու բաժին մը կը փակէ այս առաջին թիւը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Մինչ Մեծ-Հայքէն Կիւս աւերումներու կոտորածներու գուժերը ամէն օր կը հասնին, անգին ծանր վրտանգներու ենթարկուած է Փոքր-Հայքն ալ, որուն վիճակը բաղադատմամբ Հայաստանի ուրիշ նահանգներուն թի՛ջ մը տանելի կը թուի: Սեւ Երովին եզերքներուն մէկ քաղքէն հասած նամակէ մը կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները որոնք զաղափար մը կրնան տալ Փոքր-Հայքի արդի տագնապալից կացութեան վրայ:



«Սասունի կոտորածին լուրը հոս հասնելէն ի վեր մեր արդէն տխուր կացութեան հորիզոնը աւելի մոայլ կերպարանք մը առաւ: Թիւրք կառավարութիւնը և իսլամ ժողովուրդը սկսած են դարձեալ շատ ծուռ աչքով նայիլ Հայերուն: Մահմետական խուժանին խեղճ ու միտքը ջարդ ու աւար ընելու վրայ է միշտ: Ամէնուն բերանն է թէ՛ հայերը ապստամբած են, պէտք է լաւ դաս մը տալ կրկին: Երբ հայ ու թիւրք վեճ մը ունենան, հայուն վրայ բանեցուցած ճնշումին աննկարագրելի է: Նախատելով ու սպառնալով կ'ազդարարեն թէ թի՛ջ օրէն կը սորվեցնենք ձեզի, և այլն: Նմանապէ՛մ թիւրք կիներն ալ բաղնիքներու մէջ հայ կիները նախատելով միկնոյն ընկառնալիքը կը կարդան:»

«Ահն ու սարսափը ամէն հայուն րտին տիրած է: Խեղճ հայը մեծէն մինչեւ պզտիկը զուրկ չէ մնացած այս ըսպառնալիքներէն: Իրիկուն մը ժամը կէսին առեւնները հայ մը երբ շուկայ կ'երթայ իր վաւակներուն հաց գնելու համար, կը հանդիպի խումբ մը թիւրք երիտասարդներու որոնցմէ մէկ քանին կը յարձակին խեղճ հայուն վրայ զայն սպաննելու: անկայն մէջերնին խելացին և ազգեցիկը վրայ հասնելով կը համոզէ որ դեռ ժամանակը չէ, և տեղի ալ անյարմար է: Խեղճը այս անսպասելի միջամտութեան շնորհիւ կ'ազատի:»

«Այլ եւս թիւրքը քաշուիլ չունի: Միշտ իր բերնին համրիչ ըրած է ու յանգերգ թէ հայերը պիտի ջարդէնք: Մծտակայ քաղաքէ մը հասած տեղեկութիւնները գաղափար մը կրնան տալ փոքր-Հայքի թիւրք պաշտօնեաներու տրամադրութեանց վրայ: Քաղաքացետը Հայոց գլխին խնդ մը խաղալու նպատակաւ իրեն մեղսակից քանի մը պաշտօնեանեց սոյ կը գտնէ և անոնց գլուխը անցած Երւսաղէմ հեռագիր յը կը զարնէ թէ հայերը ապստամբութիւն կը պատրաստեն: Այս զեկուցումը Պոլիս հասնելուն պէս հոնկէ Ամասիա կը հեռագրուի անմիջապէս քննութիւն մը ընկերս պնսնիլ թէ որքան սաուզութիւն ունի հաղորդուած տեղեկութիւնը: Քննութեան արդիւնքը այն կ'ըլլայ թէ այդ լուրը պարզապէս զրգարտութիւն մըն է հայերը ջարդուփշուր ընելու համար: Այս իմաստով ալ կը տեղեկագրուի Պոլիս, ուրկէ քաղաքացետին պաշտօնեանկութեան լուրին կը քպասուէր Մարգարան: Բայց զուր տեղը ակնկալու կը մնայ ժողովուրդը:

«Նորանոր ջարդերուն երկիւղը միշտ կը տիրէ: Հայոց մէկ ումանը որ թիւրքերուն հետ բարեկամ են անոնց մէկ ուզած են տեղեկանալ փոքր-Հայքի մէջ տարածուած գրոյցներուն իրականացումին հաւանականութեան աստիճանը: Անուամ պատասխանները հետեւեալ կերպով կ'ամփոփուին:

Չարդի մասին տարածուած լուրերը անկիմն չեն: Կոտորածները պիտի կրկնուէին եթէ նախորդ ջարդերուն համար տրուած հրամանին զէթ կէսը տրուած ըլլար: Բայց Պոլսէն դեռ հրահանգ չէ եկած: Հաւատացէք որ առաջուրնէ շատ աւելի գէշ ընելու պատրաստութիւններ կը տեսնուին կորս թուժանին խելքը միտքը զարնել, ջարդել, աւար ընել է: Համը ամէնուն բերանը մնացած է:

«Նկատողութեան արժանի կէտ մըն է որ Սուլթանին հակառակող կուսակցութիւնը շատ կը փափաքի նոր կոտորածներու, որոնց շնորհիւ կը յօսան թուրքութիւն վարկաբեկ ընել սուլթանը: Ամէն տեղ ուր որ գաղտնապէս հակառուլթանական պաշտօնեաներ կան հոն ջարդերը շատ աւելի դիւրութեամբ եւ ակեղ վայրագութեամբ պիտի գործադրուին:

«Տագնապը ամէն կողմ տիրած ժամանակ հայ վաճառականները ապրանք աննելու համար Կ. Պոլիս կ'երթան կոր: ու կառավարութիւնն ալ հրաման կուտայ կոր երթեւեկութեան համար: Հաւերը ճամբաները բացուած են քսելով միամասաբար կը խոտեն կոր, առանց զիջանալու թէ ինչ է ըրծանին: Արդ շատ հիմնաւոր կասկածներ կան որ կառավարութիւնը մասնաւոր նպատակաւ կուզէ որ Հայոց խանութները ապրանքով լեցուին: Կամ ջարդեր տեղի կ'ունենան և թիւրք խուճանը թալանի մեծաքանակ նիւթ կը գտնէ պատրաստ, կամ շուկաները հրդեհ կը ձգուին, եւ հայ վաճառականները անգամ մը եւս կը փճանան յահագին կորուստով:

ՆՈՒՒՐԱԿԱՆ ՅԻՇՍԱԿ ՄԸ

Իրաւունքի վերջին մէկ թիւը «Կովկասէն» վերնագրով տեսութիւն մը կը պարունակէր: Սկսայ կարգաւ ընթերցումիս մէջ որքան կը յառաջանայի զարմանքս ալ արնքան աւելի կը շատնար այդպիսի յօդուածի մը յիշեալ թերթէն խմբագրուելուն համար: Բայց երբ ետքի տողը հասնելով ստորտար Բիւզանդիոն տեսայ, այլ ևս զարմանալու պատճառ մը չունէի:

Բիւզանդիոնի տեսութիւնը որ Բագուէն(?) թղթակցութեան մը ամփոփումն է, կը ձգտի վատահամբաւել հանգստեալ Գրիգոր Արծրունին, զրպարտելով մեծանուն հրապարակագիրը իրր հակահայկական ողու դաւադրութեանց անարգ գործին: «Կովկասեան պաշտօնէութեան վարդապետութիւնն է, կ'ըսէ Պոլսոյ թերթը իր կովկասեան թղթակցին բերնով, որ փակելու ուզուած հաստատութեան շուրջ խնդիրներ յարուցանել կուտայ, որպէս զի պատեհութիւն ունենայ միջամտելու, և այս բանիմաստ մար իրեն գործիք ըրած է Տփղիսի օրաթերթի մը Գանգուցեալ խմբագիրը:» Եւ կը թուէ Արծրունին տճրագործութիւնները: Եթէ կովկասեան իշխանութիւնը հաստոյր հարուած մը իջեցուց Բարեգործական ընկերութեան գլխուն, եղեանաւորը Գրիգոր Արծրունին էր: Արծրունին էր նաև որ սպաննեց Հրատարակչական ընկերութիւնը: Իրաւ է որ Մշակի հիմնադիրը 1892ին վախճանեցաւ, իսկ Բարեգործական եւ Հրատարակչական ընկերութեանց աղետներու պատմութիւնը դեռ երկուան ու պայտրուան թուականները կը կրեն: Բայց անպարկեշտ օրագրողները զրպարտութիւնները արձակած ատեննին եթէ շատ բարակները փնտտելու ելլեն, ձեռքերնին ծալլաքք անգործ նստելու պիտի գատապարտուին: «Լեզուն օսկար չունի» ըսած էին երբ դեռ մամուլ չէր ստեղծուած: Հիմալ ալ «թուղթը ոսկոր չունի» կրնանք ըսել: Ըստի Բիւզանդիոն աղանց նեղուելու նաև կը հրատարակէ թէ երբ օրին մէկը ողու կառավարութիւնը գրպէս Երեսեան հոգեւոր գպրոցն ալ, պատասխանատուութիւնը հանգուցեալ Գրիգոր Արծրունիի վրայ պիտի ծանրանայ: «Մեռած նիւթն են սր գմեղ կ'ընեն այն ինչ որ ենք»:

Աշխարհ համօրէն գիտէ թէ ողու կառավարութիւնը Չարին հպատակ ժողովուրդները ամէնքն ալ զուրպական կազմապարհին մէջ ի մի ձուլելու կը նկրտէ: Հայոց ազգայնութեան դէմ գրական հալածանքը սկսու 1888ին զպրօցներուն գրաւուումով, և մինչեւ հիմա կը շարունակուի յարաճուն սարսկութեամբ: Ռուսական կառավարութիւնը իր ակեղութիւն կ'աթնած կը ջարջախէ, կը կորստէ, կը փշրէ ոչ-ողու և ոչ-ուստադաւան քուրսակէ հպատակ ժողովուրդները, անոնց բոսունքներէն բուսեր

տեղծելու համար Արդեօք Թինլանտան ալ Գրիգոր Արծրունի մը ունէր:

Հանգուցեալ հոյակապ հրապարակագրին պաշտպանողականը ստանձնելու հարկը շեմ տեսնելու թէ՛ Ռուսիոյ, թէ՛ Թիւրքիոյ, թէ՛ Պարսկաստանի հայերը Արծրունիին յիշատակը իբր սրբուծիւն մը կը յարգեն: Կան որ կրնան Մշակի ծառայած գաղափարները, զոնէ մասամբ, կանխաժաման համարիլ հայ ժողովրդին համար, իսկ հրապարակագրին ուղղամտութիւնը միշտ լուսաշահ պիտի փայլի հայ օրագրութեան վրայ: Բիւզանդիոնի յօդուածը առիթ մըն է քանի մը խօսք ըսելու համար օրագրական տեսակ մը բարբերու մասին, եւ մօտաւոր անցեալ մը յիշեցնել:

Բիւզանդիոն շանալով վատահամբաւել Արծրունիին յիշատակը ապահով էր թէ Պոլսոյ մամուլին մէջ ընդդիմախօս մը պիտի չգտնէր: Արծրունիին մեծած է և չի կրնար խօսիլ: Իր թերթը թէեւ կը շարունակուի բայց Բիւզանդիոնի և նմանօրինակ ուրիշ թերթերու այգպիտի հրատարակութեանց ազդուապէս հերքում տալու անկարողութեան դատապարտուած է: Ըօտ ուսուական մտածութեան՝ երբ հայ մը իր ցեղին ուսուցմանը կը նպաստէ, անիկա իր այդ ուղղութեանը համար երբեք չի կրնար վատահամբաւանկեատուիլ, ուստի և ինքնապաշտպանութեան հարկին մէջ ալ չի գտնուիր:

Բայց եթէ ուղղակի կամ անուղղակի հրատարակութիւն մը իսկ ըլլայ, Մշակ որովհետեւ Թիւրքիա չի մտնել ուստի ոչ ոք տեղեկութիւն մը կրնայ ունենալ:

Պոլսոյ մամուլին մէջ հիմակ ոչ ոք կը գտնուի որ ճշգրիտ և մանրամասն տեղեկութիւններ ունենայ Կովկասեան Հայոց վերջին քառորդ դարու ներքին գործերուն վրայ, և Ռուսիոյ Հայոց անցեալ ու ներկայ կեանքովը շահագրգռուի, անով զբաղի, հետևաբար ոչ ոք կը մտաբերէ Բիւզանդիոնի դէմը ելլելու: Բայց եթէ այգպիտի հրապարակագիր մը գոյութիւն ունենար իսկ, Արծրունիին պաշտպանութիւնը ստանձնելու անկարողութեան դատապարտուած էր: Մշակի հանգուցեալ խմբագիրը Թիւրքիոյ իշխանութեան մեծ թշնամին համարուած էր: 1891ի վերջերը Պոլսոյ մամուլին բացարձակապէս արգիլուցեալ Մշակի եւ Գրիգոր Արծրունիի անունը դրուատիքներով յիշատակել: Մինչեւ հիմակ կը շարունակուի նոյն արգելքը: Արծրունիի յիշատակին ո՛ր և է նախատիք Թիւրքիոյ մատուցուած ծառայութիւն մը կը նկատուի, իսկ շատագովականը՝ թշնամութիւն: Բիւզանդիոն այս կացութեան կ'օգտուի շարունակելու համար, իբր հաւատարիմ դաշնակից Կովկասի ինչ ինչ խումբերու, քառորդ դարու թշնամութիւնը:

Թիւրքիոյ Հայերը մինչև 1876 թուականը շատ քիչ բան գիտէին Ռուսիոյ Հայոց օրուան կեանքէն: Կաթողիկոսական խնդիրներ, Պալատէնիոյ հարց ահա ինչ որ է. Պոլսոյ մամուլին Կովկասուէր հետաքրքրութեան գոհա-

ցում կուտային: Հազիւ թէ Նալբանդեանց մը կը ճանչնայինք, շնորհիւ «Ազատ Աստուածին»: Մայր-Արաքսին թէև ամէնուն բերանը բայց հեղինակին անունը կը մնար անձանօթ: Ես իսկ, որ օակագին ազգային գործերու անտարբեր մը չեմ եղած երբեք, անգիտացած եմ Մշակի գոյութիւնը նախ քան Արարատեան Ընկերութեան հիմնադրութիւնը և բարգաւաճումը: «Մեղու Հայաստանի» լսած էինք, բայց չեմ կարծեր թէ Թիւրքիացի տաս հայ զայն տեսած ըլլային: Չեմ գիտեր թէ Ռուսիոյ Հայերը մինչեւ որ աօտիճան կը հետաքրքրուէին մեզմով, բայց չեմ կարծեր թէ մեր հանրային կեանքը իր մանրամասնութիւններովը գիտցած ըլլային: Գրիգոր Արծրունիին իր Մշակովը յեղաշրջեց մեր փոխազօրձ յարաբերութեանց կացութիւնը: Մշակ որքան կը զբաղէր Ռուսիոյ Հայոց կեանքովը, այնքան ալ կը զբաղէր—եւ թերեւ քիչ մըն ալ անիւն—Թիւրքիոյ Հայոց կեանքովը:

Գրիգոր Արծրունիին սակայն Թիւրքիոյ Հայոց համար խմբագրէ անելի բան մըն ալ եղաւ՝ Հայաստանի զարգացմանը եւ փրկութեանը նիւթապէս սատարող մը: Ինքն էր որ Ռուսաստանի Հայոց հասկցուց թէ Թիւրքիոյ Հայոց դրամական աշկեցութեամբ օգնելու պարտաւոր էին: Հայաստանի նիւթական տառապանքները թեթեւեղելու համար՝ դրամ պէտք էր. Հայաստանը բարոյապէս զարգացնելու եւ ապագայի մը պատրաստելու համար՝ դրամ պէտք էր. հայկական խնդիրը արծարծուն պահելու համար՝ դրամ պէտք էր: Արծրունիին ցնցեց Ռուսաստանի Հայութիւնը, եւ Թիւրքիոյ Հայաստանը ամէնուն Հայաստանը ըրաւ: Երբ Թիւրք զինուորները կ'այրէկն Վանի շուկան, Մշակն էր որ անմիջապէս օգնութեան ձեռք կը կարկառէր կործանուած հայ խանութպաններուն: Երբ սովը Հայաստանը կը կոտորէր Մշակն էր որ, իր բաժինը ըլլալով, 50,000 ռուպլի կը հանգանակէր եւ անմիջապէս կը հասցնէր սովատանջներուն. Հայաստանի զարգացմանը համար Մշակն էր որ 20-30,000 հազար ռուպլի կը հասցնէր Արարատեան Ընկերութեան. հայկական խնդիրը վառ պահելու նպատակաւ Վիէննա ֆրանսերէն թերթի մը, Լ'Օրիանի հիմնարկութիւնը Մշակն էր որ կը հովանաւորէր 10,000 ռուպլիով: Հիմակ չեմ ուզեր խօսիլ Թիւրքիոյ Հայոց վրայ Մշակի բարոյական ազդեցութեան մասին. կը բաւականանամ յիշեցնելով թէ Հայրիկ եւ Ներսէս Վարժապետեան Մշակով Հայրիկ ու Ներսէս եղան Ռուսիոյ Հայոց համար: Գրիգոր Արծրունիին մեղի ընծայած նիւթական օժանդակութեան վրայ կը ծանրանամ, վաճաղի ընդհանրութիւնը շօշափելի ապացոյցներու միջոցաւ անելի դիրքութեամբ կը գնահատէ մատուցուած աշկեցութեան յարգը:

Այս անցեալին յիշատակութիւնը բնականաբար անելի զուելի կը ներկայացնէ Գրիգոր Արծրունիի օրութեանը յիշատակին դէմ յայտնուած ապերախութիւնը

Թիւրքիոյ Հայոց Պոլսական այն թերթին մէջ որ այսօր էն կարեւորը կը համարուի եղեր: Բայց փութամ ըսել թէ այս տխուր գործին ամբողջ պատասխանատուութիւնը պէտք չէ ծանրացնել Թիւրքիոյ Հայոց այս կամ այն հրապարակագրին վրայ միայն: Պոլիս հակաարժրունեան հալածանքին նախաձեռնութիւնը կովկասէն է, Բիւզանդիոնի եւ մաս մը կովկասցի Հայոց միջեւ հաստատուած դաշնակցութեամբ մը: Այդ դաշնակցութիւնը այսօր կամ երէկ չէ որ հաստատուած է, այլ շատ ու շատ տարիներէ ի վեր, ու կը շարունակուի անընդհատ վատութեամբ, վասն զի եթէ Արժրունին մեռաւ բայց իր տարածած գաղափարները չ'անհետացան, ու իր հիմնած գործն ալ կը շարունակուի ժողովրդին համակրանքովը:

* * *

Պէտք է շատ երթալ փնտտելու համար Գրիգոր Արժրունիի դէմ Թիֆլիս եւ Պոլիս յարուցուած հալածանքին շարժանիքները: Ու չեմ ալ կարծեր որ անարգ գործերու պատմութիւնը կարենան դիւրութեամբ ըմբռնել անոնք որ բազմաթիւ տարիներէ ի վեր շարունակաբար հետամտած չեն կովկասի Հայոց ներքին կեանքին:

Մշակին հիմնարկութիւնը 1872ին վրդովեց կովկասի Հայոց ներքին կեանքը: Գաղափարներու ուժգին ընդհանրում մը չէր միայն որ տակնուվրայ կ'ընէր հայ ժողովրդը, այլ շատ մը շահեր յանկարծ կը վտանգուէին անողօքելի հրապարակագրի մը խտտապահանջութեամբը: Կարգ մը գրողներ ալ աներևութացման կը դատապարտուէին, եւ նախաձեռ կը սկսէր նստիւրագործել Արժրունին, Մշակը եւ մշակական կուսակցութիւնը որ սկսած էր ըստեղծուիլ: Շատ չանցած կովկասի հանրային կեանքը ամողջապէս Մշակականներու իշխանութեան ներքեւ մտաւ:

Գրիգոր Արժրունի եւ Մշակ շուտով ժողովրդական դարձան Թիւրքիա և ամենազգեցելի:

Այս նոր երևոյթը ահեղապէս վրդովեց հակամշակականները, որոնք շուտով ըմբռնեցին թէ Արժրունիին դիրքը աւելի պիտի զօրանար կովկասի մէջ շնորհիւ այն տեսակ մը բարոյական գերիշխանութեանը որուն սկսած էր տիրանալ Թիւրքիոյ մէջ, ուստի և Մշակը, անոր խրմբազիրը եւ ամբողջ կուսակցութիւնը է. Պոլսոյ մամուլին միջոցաւ վարկաբեկ ընելու հետամտեցան:

Այդ միջոցներուն է. Պոլսոյ հրապարակին վրայ երևան եկած էր երիտասարդ նոր գրող մը որ բաւական զեղեցիկ յոյսեր կուտար: Քանի մը տարուան մէջ այդ հրապարակագիրը Պ. Բիւզանդ ֆէլեան, տիրեց Մասիսին որ մեր էն կարեւոր եւ ազգեցիկ թերթն էր այն ատեն: Նորածիլ խմբագիրը սեփաւ կամաց կամաց Մասիսը Թիֆլիսի հակամշակական կուսակցութեան բերանը ընել:

Թիւրքիոյ Հայոց զանազան խնդիրները որոնք ամէն օր Մշակի մէջ ալ կը յուզուէին, դիւրացուցին Պ. ֆէլեանի գործը: Այսպէս, օրինակի համար, Երուսաղէմի պարտքին հատուցման խնդիրը ընդդէմ Մշակի զէնք մը եղաւ Մասիսին ձեռքը: Երկու միաբան Երուսաղէմէն կովկաս պատուիրակ զրկուած էին հանգանակութեան համար. Մշակ հակառակեցաւ ինպատ մանքի մը, մանաւանդ օտար հողի վրայ գտնուող վանքի մը, զրամ նուիրելու, մինչ անդին Հայաստանը ահազին պէտքեր ունի: Մշակի ձայնը լսելի եղաւ, եւ ահա Մասիս կազմ եւ պատրաստ էր Մշակը ազգատեաց, Հայաստանեայց Եկեղեցիին թըշնամի հոչակելու: Հետզհետէ կովկասէն ալ նիւթ կը մատակարարուէր Պ. ֆէլեանին որ Գրիգոր Արժրունին «սրիկայ» անուանելու չափ առաջ գնաց:

Այդ ժամանակ Պոլիս Մշակական թերթ մը չի կար: Ես տակաւին Պոլսոյ հրապարակագրութեան մէջ մտած չէի. թէ և Մշակի հետ ամենասերտ յարաբերութիւններ ունէի, բայց նիւթապէս անկարող էի Պոլիս կուուիլ կովկասի հակամշակականներուն դէմ: Կը բաւականայի երբեմն երբեմն կովկասեան լուրեր հաղորդելով Թիւրքիանէն: որ հայատառ եւ թրքաբարբառ ըլլալով չա'տ իշափաւոր ազգեցութիւն մը ունէր: Մասիսին վրայ ու է ներգործութիւն ունենալ ինձի անհնարին էր, չուզելով այդ թերթին մօտենալ: Ինչո՞ւ Մասիսին բարեացակամութեանը զիմելու խոնարհութեանը յանձնառու ըլլայինք. անկարելի էր մեր մասնաւոր թերթը ունենալ: Մասիսի տէրը Պ. Իւթիւնեան անսահման իշխանութիւն տուած էր Պ. ֆէլեանի. ու այդ խմբագիրը իր ամենազօրութեամբը ուռած, փքացած, այլ եւս կը կարծէր թէ Թիւրքիոյ Հայոց բոլոր մտաւորականները իր տրամադրութեան ներքեւ պիտի կրնար ունենալ: Ա՛լ ոչ ալ կը նայէր ո՛չ ձախ, ոչ բարոյականութեան ուշադրութիւն կը դարձնէր, ո՛չ անբարոյականութեան: Մենք ալ երիտասարդ էինք եւ մեզի համար ամօթ մըն էր ձեռքերնիս ծալլած նստիլ օրագրական կամակոր լրբութեան հանդէպ. երկու տարուան տշխատութենէ յետոյ հիմեցինք Արեւելքը:

Այդ նոր թերթը օրագրի իմ մտատիպարիս ամբողջապէս չէր համապատասխաներ, բայց հարկ էր այսպէս թէ այնպէս համաձայնիլ բարեկամներու հետ որպէս զի հնարաւոր ըլլար գոնէ կարեւոր հարցերու մէջ Մասիսին ընդդիմադրել: Առեւտրի վարչական խորհրդին իմ մտանակցութեամբս եւ թերթին խմբագրութեան վրայ ունեցած ազգեցութեամբս Մշակական կուսակցութիւնը իրեն նըւիրուած մամուլը կուսնար Թիւրքիոյ մէջ: Նոր թերթը անմիջապէս Մշակի զրօշակը պարզեց: Գրիգոր Արժրունի, Բաֆֆի, Համբարձում Աւագելեան, Խաչատուր Մալումեան, Լեւ, Մշակի բոլոր ուղայակոյտը, բոլոր Մշակականները ալ եւս Թիւրքիոյ Հայոց համար օրուան մարգերը եղան: Անոնց յօգուածները, վէպերը, թղթակ-

ցութիւնները կը հրատարակուէին Արևելքի մէջ. Մշակական կուսակցութիւնը այլ եւս թիրքիա ամուր կգուշնի մը վրայ կը կոխէր. ու ապագան իրենն էր:

Արևելքի հիմնարկութենէն վեցամիս ետքը Մասիս կ'անհրեւութանար: Պ. Իւթիւճեան իր անխոհեմութեանը պատիժը գտած էր: Երեսուն Յրիւ տարուան հաստատութեան մը քարուքանդ կործանեցաւ վասն զի նորաբոյս խմբակիր մը անսահման ազատութիւն վայելելով թերթին տիրոջմէն, յանդգնած էր խաղալ մեզի հետ: Պ. Քէչեան իբր քաղաքական խմբակիր կցուեցաւ Արևելքի, բայց ո ե է ազդեցութիւն չունէր: Ու ետքէն երբ Ազգային տեսութիւններն ալ ինքն սկսաւ գրել, միշտ կաշկանդուած կը մնար. վարչական խորհրդին կողմէն տրուած հրահանգներուն համեմատ գրելու պարտական էր. իր բոլոր յօդուածները տպագրուելէ առաջ կը կարգաշցուէին, եւ յետ վաւերացման միայն մամուլի տակ կը գրուէր թերթին առաջին երեսը:

Պ. Քէչեանի Մշակի դէմ առեւելութիւնը սասակացած էր Արևելքի երևման առթիւ Գրիգոր Արծրունիի այն յայտարարութեամբը թէ «թիրքիոյ հայերը դեռ այսպիսի թերթ տեսած չունէին»: Պ. Քէչեան իրեն անձնապէս նախատինք կը համարէր մեզի տրուած այս գրուատականը: Եւ սակայն Արևելքի առաջին խմբակիրը ինքզինքը զսպելու պարտաւոր էր: Ես շատ չէի զբաղեւր առաջին երեսի բոլոր մանրամասնութիւններովը, տեւիլ ուշադիր էի երրորդ երեսին ուր հետզհետէ հաւաքուիլ սկսան բոլոր նոր գրողները, եւ որուն խմբագրապետութիւնը յանձնուած էր Լեւոն Բաշալեանին, թէեւ հազիւ տասնը եօթ տարեկան պատանի մը ան ատեն: Պ. Քէչեան որ Արևելքի առաջին երեսին մէջ ըստ բաւականին մաքսանենգութիւններ ընելու յաջողեցաւ, սասայն օր մը երբեք մաքէն չանցուց ո' ե է աննպաստակարարութիւն սպրդեցնել ընդդէմ Մշակի: Գիտէր թէ ո' ե է նենգաւորութիւն ահեղ փոթորիկի մը պայթումը յառաջ պիտի բերէր:

Բայց ծագեցան խնդիրներ որոնց առթիւ Մշակի եւ Արևելքի վարչութեան միջեւ տեսութեանց տարբերութիւններ երևան եկան: Այն պարագային հարկ եղաւ Մշակի պատասխան մը տալ: Եւ ահա տեսանք որ Մշակ արտատպած էր մեր յօդուածը, յանձնարարելով զայն իր ընթերցողներուն իբր օրինակ մը որուն պէտք է հետեւի մամուլը հանրային խնդիրներու վիճարանութեան մէջ:

Թիֆլիս 1885ին նոր օրաթերթ մը սկսաւ հրատարակուիլ իբր բերան պահպանողական կամ թէ ինչպէս անդին կ'ըսեն, «խաւարամիտ» կուսակցութեան: Այդ թերթին դէմ անսիշապէս թշնամական վարժունքի մը հետեւելու պատճառ մը չունէինք, բայց շատ շունցած տեսանք թէ աղտոնողութեանց պատկանորթան մըն է: Մշակ զայն փողոցային թերթ անուանեց, իսկ Արևելք անոր գոյութիւնը մոռցաւ, ու ես այլ եւս զայն ձեռք չառի:

Պահպանողական կուսակցութեան յրշագոյն ատար իրեն բերան ունէր Սրճազանգ շարածաթերթը: Երբ 1884ին Թիֆլիս գացի տեսայ թէ Մշակի եւ Սրճազանգի խմբակիրները ինչպէս եւ իրենց կուսակցութիւնները փոխադարձ յաւ յարաբերութեանց մէջ էին: Պոլիս վերադարձիս Սրճազանգի նկատմամբ ես Արևելք նպաստաւոր ուղղութեան մը հետեւեցաւ:

Փողոցային թերթին երեսումին վրայ շատ չանցած Մեղրա Հայաստանին անհրեւութացաւ: Թիֆլիս հետզհետէ ունեցած էր Մուշաբ ամսաթերթը եւ Տարազ շաբաթաթերթը, որոնց հետ մեր յարաբերութիւնները համակրական եղան:

Արևելքի այս ուղղութիւնը շարունակուեցաւ մինչեւ 1890ի սկիզբները: Այդ ժամանակամիջոցին մանր մունր թերթեր միայն որոնք շաբաթ մը միայն կը հրատարակուէին, առանց ամիսներով երեսան գալու, անոնք կը մնային հակամշակական, եւ հաս մըն ալ իզմիրի Արևելեան Մաւռալը որ շատոնց կարեւորութիւնը կորսնցուցած էր: Թիրքիոյ հայերը կ'անգիտանային Թիֆլիսի յետադիմական մամուլը, եւ կը ճանչնային միայն Մշակը որուն ազդեցութիւնը մեր վրայ ամենահզօր զարկ տուած էր Բաֆֆին իր վէպերովը: Բայց 1890ի սկիզբները Արևելքի վարչական մարմինն մէջ փոփոխութիւններ մտան: Երկու պաշտօնակից ու ես հրամարեցանք. մեզի յաջորդողները, ինչպէս եւ արդէն մնացող միւս երեքը բան մը չէին հասկնար ռուսական Հայոց գործերէն: Պ. Քէչեան սկսաւ քիչ մը շունչ առնել, ու իրեն հետ ուրախացան Թիֆլիսի հակամշակականները: Եւ սակայն Բաշալեանին հետ մենք կը շարունակէինք Մասիս հանդէսին հրատարակութիւնը, Արևելքի երրորդ էջին կատարելագործեալ ուղղութեամբը, եւ բոլորովին անկախօրէն: Այս պայմանին մէջ հնարաւոր չէր որ Արևելք սկսէր պայքար մղել Ռուսիոյ Հայոց յառաջդիմական կուսակցութեան դէմ: Ինչպէս կարելի էր վեց տարուան ընթացք մը յանկարծ փոխել, պէտք էր սպասել աւելի նպաստաւոր պարագաներու, որոնք չուշացաններ կայանայ:

Մասիսը 1890 յուլիս 15ի դէպքերուն հետևանքով այլ եւ չհրատարակուեցաւ: Կ. Պոլսոյ հայ մամուլը դարձեալ կը մնար Պ. Քէչեանի ձեռքը: Օրագրական հրատարակին վրայ Արևելքի միապետութեանը երկար շնորհակց: Հայրենիքը իբր 10 փարձնոց թերթ երկան եկաւ: 1891 յուլիս 13 25ին իր հետ ունենալովայն գրական խումբը որ Արևելքի երրորդ երեսէն Մասիս տեսած էին Բաշալեանի եւ ինծի հետ, ու հիմակ ալ արձեւալ սեղի հէտ Հայրենիք կը փոխադրուէին: Մեր ացակայութեան ու թ ամուտան ժամանակամիջոցին Արևելք կ'ովկասեան Հայոց նկատմամբ զգուշաւոր ընթացքի:

հետեւած էր: Մշակականներու գէժ յարձակում տեղի ունեցած չէր, բայց լուսթեան քաղաքականութիւնը կը տիրէր: Սակայն կ'ընդունիւ թէ Մշակի էն շերտ կուտակիցներն հսկայն տաղանայի ժամանակը պիտի զգուշանային իրենց բարեկամութիւնը հրապարակաւ յայտնելու:

Երբ Հայրենիք հրատարակուի սկսաւ, ես անձնապէս ծանր կացութեան մէջ կը գտնուէի Կովկասեան Հայոց մասին խօսելու համար: Ռոտիկանութեան Դուռը իմ հարցաքննութիւններս զլուսարարակէ Մշակի շուրջն էին դարձած, ես իբր մշակական մը ամբաստանուած ըլլալով: Պատասխանս եղած էր թէ « երբ թերթի մը մուտքը թիրքիա արդիւնած չէ, այդ թերթը երկրին թշնամին նկատելու պատճառ մը չի կայ: Կ. Պոլսոյ մասուրը ամէն օր Մշակէն լուրեր և յօդուածներ կ'արտատպէ, և Մշակին ի նպաստ կամ աննպաստ յօդուածներ կը հրատարակէ»: Ինծի յայտարարուեցաւ թէ « կ'երևի որ մտքուած է»: Խնդիրը այստեղ մնաց:

Այս դէպքէն ութ ամիս ետքը Մշակ դեռ ազատօրէն Պոլիս կը մտնէր. ու ես չէի կրնար լուսթեան հանգուրծել: Մակար Կաթողիկոսի մահուամբը Կաթողիկոսական խնդիրը կը յուզուէր. Պ. Քէչեան աւիթէն օգտուեցաւ իր զգուշաւոր ընթացքէն հեռանալու համար: Իբր թիֆլիսի պահպանողականներուն բերանը, սկսաւ Հայրիկի և Սեղրակեան եպիսկոպոսին ընտրելութեան դէմ կոտիլ: Առաջինին համար քօղարկեալ բացատրութիւններով հասկցուց թէ « Չարը զայն երբեք կաթողիկոս պիտի չվաւերացնէ:» Իսկ Սեղրակեան եպիսկոպոսի եւ անոր հետ բոլոր Մշակականներու դէմ լրբնի մարտըն շուրջ շարունակեց, իբր թիֆլիսի երկու թերթերուն բերանը: Անոնց ընտրելին Աշքեան Խորէն եպիսկոպոսն էր:

Արևելքի նոց վարչական խորհուրդը որքան որ ալ ազէա եղած ըլլար Ռուսիոյ Հայոց գործերուն, բայց և այնպէս զիտէր թէ թերթը Սեղրակեան եպիսկոպոսին բարեկամ եղած էր: Իրսէն բարեկամներ ալ ներգործելով վարչութեան վրայ, Պ. Քէչեան հրաման օտացաւ «անպատշաճ լեզուով» չգրել Արիտակէտ եպիսկոպոսին դէմ: Պ. Քէչեան շուարած մնաց, բայց բաւական վարպետ էր զիտ մը ընելու համար, ուստի գնաց համագեց վարչութեան տտենպետ Պ. Արթաքի Նորատուեկեանը թէ « Հայրենիքի հիմնարկութեան զրամագլուխը Սեղրակեան եպիսկոպոսը հայթայթած է:» Եւ որովհետեւ մեր թերթին հրատարակութիւնը ամենածանր հարուած մը տուած էր Արևելքի բարոյական ազգեցութեանը ու նիւթական շահերուն, հետևաբար Սեղրակեան Արիտակէտ եպիսկոպոսը պէտք էր թշնամի մը նկատել եւ հետը բոտ այնմ վարուիլ: Այս սուտերով Պ. Քէչեան բաց օտորագրութիւն օտացաւ Մշակականներուն դէմ կոտի համար:

Առդիս ալ Հայրենիք առանց վարանուծի օտանձնեց թէ Հայրիկը, թէ՛ Սեղրակեան եպիսկոպոսը պաշտպանելու: Կատր: Ու նաև Մշակի սերտ բարեկամ հայրիկ սացանք ակնբեր կերպով, ինչպէս անդին ալ Մշակ մեր զօրավիզը կը հանդիսանար: Բազմամեայ բարեկամութիւնս կը շարունակէինք անարգել: Հայրենիքի յօդուածները Մշակի և Մշակի յօդուածները կ'արտատպուէին Հայրենիքի մէջ: Գրեգոր Արծրունիի Էվելիեա վիպակը հրատարակեցինք մեր աշխարհագրին վերածելով: Ռոտիկանութիւնը մօտնալ կը թուէր Մշակը և Ռուսահայերը, իր բոլոր ուշադրութիւնը Հնչակեաններուն նուիրելով:

Այս հանգօտութիւնը երկար չտեւեց: Հայրենիք 1892 մարտ 13ին երրորդ անգամ ըլլալով, — ութ ամսուան մէջ —, անպայման դատարուծի կը դատապարտուէր. ու երբ շորս ամիս ետքը բացուեցաւ, կացութիւնը բոլորովին փոխուած գտանք: Մշակի թիրքիա մուտքը արդիւնած էր. Կրպենիչին հրահանգ արուած էր շթոյլատրել Մշակի անուան յիշատակութիւնը: Ազգարարուեցաւ նաև որ՝ Մշակի հետ օ և է յարաբերութիւն պիտի նկատուի իբր քաղաքական յոնցանք: Թիֆլիսի միջոցին Պօլիս հասած էր, եւ օտտիկանութեան մէջ պաշտօն օտանձնած: Ան էր որ, իբր հսկող Հայրենի թերթերուն, օտտիկանատան ուշադրութիւնը հրաւիրեց Մշակի վրայ:

Որքան որ կարող չէինք այլ եւս ուղղակի նպաստաւորել թիֆլիսի յառաջիմական մամուլը թիրքիոյ մէջ, բայց եւ այնպէս անուղղակի միջոցները մեզի չէին պակասեր մեր նպատակին հասնելու համար: Միևնոյն ժամանակ մեզի նպաստաւոր չէր որ Մշակն ալ Հայրենիքի շատ շերտ կուտակից մը երեսար, ուստի բնորոշի Մշակէն շափաւոր բարեկամութիւն մը միայն ցոյց տալ:

Երբ 1892 դեկտեմբերին Գրեգոր Արծրունին վախճանեցաւ, Մշակն ալ միևնոյն ժամանակ կառավարական տնօրինութեամբ գազրեցաւ, մինչեւ նոր խմբագրի մը ընտրութիւնը և վաւերացումը: Բայց այդ ժամանակաւ միջոցին Արևելք Պ. Քէչեանի միջնորդութեամբ եւ թիֆլիսի հայերէ ոմանց զրգուծովը շարունակեց հալածել հանգուցեալին յիշատակը, եւ ամբողջ Մշակական կուտակցութիւնը: Արևելք հրատարակեց թէ այնինչ Արծրունին վախճանած, եւ ահա կառավարական պաշտօնեայ մը Մշակի խմբագրատունը ներկայանալով կը ծանուցանէ թէ թերթը առանց ո՛ր եւ է արգելքի կրնայ շարունակուիլ: Այս սուտը զլտորցուցին այնպիսի զարձուածքներով որ թիրքիոյ Հայերը կարծեցին թէ Մշակը ուղղակի օտտական կառավարութեան մէկ գործիքն է: Եւ սակայն Մշակը ամբողջ օտտի մը գազրած մնաց, վասն զի թէ թերթին սեփականութիւնը բոտ Արծրունիի կտակին կը փոխանցուէր Տիկին Արծրունիի, սակայն թերթը չէր կրնար հրատարակուիլ մինչեւ օր պատասխանատու խըմ-

բարգրապետ մը նշանակուեալ արտօնատեր տիկնոջ կողմէն, եւ կառավարութիւնը զայն վաւերացնելու: Հանձնարարական Արժրոնի թաղման օրը պատահած զէպը մը շատ դժուարացուցած է խմբագրապետի մը ընտրութեան գործը: Պ. Համբարձում Ասաբեկեան առաջարկուեցաւ այս պաշտօնին, բայց Բեգրպուրկէն չվաւերացուցին: Յետոյ Պ. Ալեքանդր Քալանթար առաջարկուեցաւ խմբագրապետ Մշակի Երեւան գործոց նախարարութիւնը արդեւ չյարուց, ու թերթը սկսաւ վերստին հրատարակուիլ 1894ին, իր բոլոր նախորդ խմբագիրներուն եւ աշխատակիցներուն աջակցութեամբ: Մենք Պոլիս մեր համակրանքը շարունակեցինք Մշակին: Գործը կ'աւարէր, ուստի եւ հակառակորդներու ատելութիւնն ալ աւելի և աւելի կը բորբոքուէր. անդադրում հալածամբք շարունակուեցաւ, ինչպէս Թիֆլիս նոյն եւ Պոլիս. բայց Պոլիս միշտ չափաւորութեամբ եւ վարանումով, վասն զի ինչ որ ալ ըլլար կառավարական խտրութիւնը բայր եւ այնպէս միջոցներ պիտի չպակտէին մեզի անուղղակի կերպով Հայրենիքի միջոցն ոչնչացնել Արեւելի Թիֆլիս խաշունչ ջտութիւնները: Հայրենիքի շնչումը բախտապարէկ թողուց Պ. Քէչեանի, որ մանաւանդ Բիւզանդիոնի արտօնութիւնը ստանալէ յետոյ այլ եւս անանց ու եւ արգելքի մը հանդիպելու չորս տարիէ ի վեր կց ջանայ Թիւրքիոյ Հայոց մէջ օրէ օր տկարացնել ազդեցութիւնը այն թերթին եւ այն կուսակցութեան որ Թիւրքիոյ Հայոց մատուցած ծառայութիւններով տիրապետած են մեր սրտերուն, եւ որոնց վրայ ապագային համար յուսադիր մնալու իրաւունքներ կրնանք ունենալ:

Բայց պոստի վաղանցիկ կ'ընդունիմ թէ Բիւզանդիոն խմբագիրը իր քսան տարուան նպատակին հասնելու համար հիմակ աւելի քան երեք նպաստաւոր պայմաններու մէջ կը գտնուի: Հեռացան, գացին այն օրերը ուր Ռուսիոյ և Թիւրքիոյ հայերը արդարեւ եղբայրներ էին: Մեր սրտերը մէկտեղ կը բաբախէին հայրենիքի համար, մեր հոգիները իրարու փարած կը սաւանդէին Հայաստանի վրայ, և հայ ժողովրդին վիճակը բարոյցելու համար մեր մաքերը միևնոյն ուղղութեամբ կը խորհէին: Հիմակ Այո՛, Թիւրքիոյ Հայոց տրամադրութիւնները նպաստաւոր չեն Ռուսիոյ Հայոց, բայց դժբաղդութիւնը հոն է որ հայ ժողովուրդը պատասխանատուութիւնները կը շփթէ:

Ինծի համար շատ ուշագրաւ իրողութիւն մը չէ որ Բիւզանդիոն Գրիգոր Արժրոնի յիշատակը կ'անարգէ. բայց երբ այդպիսի գրպարտութիւնները առանց դիտողութեան կ'արտասպուսին Թիւրքիոյ Հայոց այնպիսի թերթի մը մէջ, որպիսին է Իրաւունքը, ան ասեմ կը սկսիմ մտածել: Եւ արդարեւ վառնա հրատարակելու այդ թերթը թէն ո՛ր է կուսակցութեան մը չպատկանիր բայց և այնպէս կրնանք մինչեւ աստիճան մը մեր բարե-

կամներուն շարքը գտնել զայն: Ռեբեմ Իրաւունքն է մասնաւոր պատճառ մը չունի Արժրոնին, Մշակը, Կովկասի յարաշրիմակտն կուսակցութիւնը ատելու: Հասանքէն կը վարի անգիտակցաբար:

Անգիտակցաբար հասանքէն կը վարին Թիւրքիոյ Հայոց կողմէն արտասահման հրատարակուած ամէն թերթերը: Անոնք բոլորն ալ հազիւ թէ երբեմն երբեմն Մշակի անուան յիշատակութիւնը ընել յանձն կ'առնեն:

Տխուր և վտանգաւոր երևոյթ: Մի՞ վէ յանցաւորը սակայն:

Չեմ ուզեր այս հարցումին նայօր պատասխանել: Կը յիշամ շատ չանցած վերադառնալ այս խնդրին:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԹՇՈՒԱՌՆ ՈՒ ԳԵՂԵՑԻԿԸ

Ծնորհակալութեամբ ստացանք զեղեցիկ հրատարակութիւն մը զոր Բազմավեպ հրատարակ կը հանէ ՈՐԲՈՒՆԻ անունին տակ, որպէս զի Միսիթարեան Միւսաբանութիւնն ալ նպաստէ Հայաստանի սրբերուն ցաւերը ամոքելու և ազգին այդ տարաբաղզ գաւակները «մարդ ընելու» գործին:

Անգութ զգացման մը արտայայտութիւնը պիտի համարուէր յիշումը Ֆրանսիական առածին թէ «գժաղդութիւնը օգտակարութիւն մըն ալ կրնայ ունենալ»: Բայց խոստովանինք թէ այդ գառն մտածութիւնը բոպէ մը սահեցաւ մտքերնուս առջիւն երբ ՈՐԲՈՒՆԻԻ թղթատել սկսանք՝ «Այսպէս ուրեմն» կ'ըսէինք մենք մեզի, պէտք է եղեր որ 19րդ դարուն էն տեղ գործը ծանրանայ ըրիտօտնէութեան խղճին վրայ, որպէս զի զեղեցկասիրական հրատարակութեանց թուական մը բացուի պարբերական հայ մամուլին համար:»

Այնինչ կը բանտնք Որբանիին առաջին երեսը, մէկէն ի մէկ սրտերնիս կը ճանկոտէ զայն տխրազարգող պատկերը: Ամէնքս ալ մայրեր ենք երբ սեր մը ցաւ կը ծնի: Մայրական սէրով է որ այդ որբ աղջկան կը փարիսք: Կենսագրական տեղեկութիւն մը անոր ով ըլլալը մեզի չի պատմեր. պարզ յիշատակութիւն մը միայն կայ, «որբիկ»: Բայց այդ որբիկին զուտը կ'սին չէ, անոր աչքերը արցունքով չեն լեցուած, գլուխին հայցող աղջիկը չէ անիկայ ինչպէս խեղճուկ որբուհին որ կեանքի բնական բերութեանովը կորսնցուցած է հայրն ու մայրը: Այդ աչքերը որ պիշ պիշ ընդ կը նային, եղբերգութիւն մը կը պատմեն: Այդ աչքերուն մէջ սարսափը քարացած է. կը յիշեցնեն կառափնուտին սերքէն թառ զուտ մը ու

րուն ականողիքը դեռ ատկէն յը բաց կը մնան, հոգիին սարսոզ տանջանքները խառնեցնելով: Խօր քունին մէջ վայնառունի սուր ճիչէ մը ընդօտ ցատկող աղջկան մը ցիրուցան մագերն են զիտուն վրայ: Ու կը զգես թէ անոնց արմատները անկուած կը մնան արամի մը ելեկ-տրական ցնցումէն: Չմրան գիշեր մը տաքուկ անկողնէն զգարս սուրացեր է այդ աղջիկը, եւ դեռ կը զզզուփայ: Իր թաղը կրակի մէջ է. խառնագազան վայրենիներու վոհ-մակ մը կը կտորտէ դրացիները. աչքերուն առջեւ զարկեր, սպաններ, մարմեր են հայրը, մայրը, քոյրերը, եղբայրները, ինքն ալ չգիտէ ինչպէս ապրեր է: Լայնկէկ բուրջ մը մերկ մարմին վրայ նետեր է իբր յօթիկ, բայց ան չհասնիր մինչեւ իր քուերը, որոնք կը սարսուռն: Կծկուտուղ մատները որոնցմով կը ջանայ վրան պահել վար ինչայու հակամէա լաթին կտորը, մասներն են քնէածեալի մը որ իբր մեռեալ գերեզման դրուած է, ու արթնալով փրկութիւնը կը փնտէր մասներէն որոնք ի-րենց անզօրութեանը մէջ կը պրկուին, կը կտորտուին:

Կը փափաքէինք որ այդ «որբիկ»ը պրակին ամբող-ջութենէն անջատուած, առանձինն եւս հրատարակուէր, եւ շրջանակի մէջ կախուած մնար ամէն հայու տուն, սրտերու իբր յուշարար մը Հայրենիքի օրուան կեանքին:

«Որբիկ»ին կ'ընկերանայ «Պատառ մը հաց հայ որբին» հայ ժողովրդին ուղուած սրտայոյզ հրաւեր մը Հ. Ս. Երեմեանէ:

Հանդէսը այնուհետեւ պաշտօնապէս կը բացուի Ալի-շանի «Երբեակ-Ներսէսեանց» պատմական գերապանծ տեսութեամբը, որ Յռչիկներու հմայքովը կ'զգլխէ ընթեր-ցօղը: Երեք Ներսէսներու՝ Պարթեւ, Շնորհալի, Լամբրո-նացի, պատկերները կը մարմնացնեն մեր երեւակայած մտատիպարները:

Յաջորդ գլուխը նուիրուած է ժիժ գարու «մի քանի ազգային նշանաւոր բարերար»ներու կենսագրութեանց: Հետզհետէ աչքերնու առջեւ կը սահին Ներսէս Է, Յովհաննէս եւ Յովակիմ Լազարեան, Աստուածատուր Զունդ Նուպար փաշա, Յարութիւն Ամիրա Պէլզեան, Յովհաննէս պէյ Տատեան, Պողոս պէյ Տատեան, Կարապետ Ամիրա Պալեան: Ասոնց կը կցուին՝ Բարիգի երբեմն Մու-րատեան վարժարանի շէքը, Վենետիկ միշտ կանգուն Ռափայկեան վարժարանը իր հայկապ գահլէճովը, Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանը:

Երրորդ գլուխը կը պարունակէ Երզրացի հայագէտ-ներուն կենսագրականները ու կենսագիրները: Հետզ-հետէ կը տեսնենք Յրեմեանի Միլլէր, Մէյնէ, Վիկտոր Լանկուա, Ֆետտեր, Լորտ Պայրն, Կոնիքեր (հանգրձ ընտանեօք), Ռուպինըն, Տեզա, Մառ: Հ. Յ. Թորոսեան ամփոփ տեղեկութիւններով կը ծանօթացնէ այդ հայա-գէտներն ու հայասերները որոնց անունները հայ ժողովրդին ամէն խաւերուն մէջ թափանցած չին:

Հազիւ թէ ընթերցողին միտքը թիչ մը կը հանգչի ի տեօ այդ գեմբերուն որոնք հայը սիրեցին եւ ուզեցին զայն բաղաբակիրթ աշխարհին սիրեցնել, ահա նոր էջ մը իրականութեան աշխարհը կը փոխադրէ քեզի, եւ կը փորձուիս հարցնել «պո ինչ օգուտ այդ սէրը»:

Բարեգործութեանց համայնապատկեր մը կը պար-զուի աչքերնու առջեւ: Ամէն բարեգործութիւն շարագոր-ծութեան մը անհերքելի ապացոյցն է: Ուր բարերար-ութիւնը երևան կուգայ հոնկէ շարագործութիւնը արդէն անցած պէտք է ըլլայ: Չարութեան մը մեծութիւնը ա-նոր դարձանին համար գործադրուած բարութեան որ-քանութեամբը կը հաստատուի: Բարեսիրութեան հիմնած այդ որբանոցները որոնք իրարու ետեւէ կը շարուին, կը հաւաստեն թէ շատ մեծ շարութեան մը գործուեր է մեր հայրենիքին մէջ:

Ու լքումի րուպէին ահա Արարատը կը բարձրանայ դէմը. Հայուն յաւիտեանական հաւատքին անսասան կօ-թողը, եւ կը յիշեցնէ քեզի «անցանէ եւ այս»: Հիմակ Հ. Եփրեկեան մեզի փոխադրած է մեր բնաշխարհին մէջ, եւ սրտերնիս պատմութեան կարոտով գեղուած, կը հանգ-չի ընդ հովանեաւ մենաստաններու որոնցմէ ումանք ճար-տարապետական հրաշակերտներ են:

Փոխ ընդ փոխ հինն ու նորը իրարու կը յաջորդեն, ցեղի մը կեանքին անընդհատ շարունակութեանը իբր ցուցցում: Ահա յանկարծ կ. Պոլսոյ գրական ծանօթ ու կիտածանօթ գեմբերու հանդէպ կը գտնուինք պրակին մէջ եւ կողքին վրայ: Անոնցմէ ոչ մէկուն զիմագծերը երբեք Արուեստին այդքան կատարելագործութեամբը գեղեցկա-տիպ տեսած էինք:

Յաւագին լքումի խորհրդանշանով բացուած, խան-դավառ հաւատքի խորհրդանշանով կը փակուի Որբունին: Երկու մեծ գէմք իրարու առնթեր են: Մխիթար Աբբայ եւ Գրիգոր Արժրունի. Գաղափարի հրաշագործութեանց անըզուելի հաւատքը ներշնչող երկու սուրբերը:

* * *

Բաւական կը համարինք Որբունին պարունակու-թիւնը մեր ընթերցողներուն համառօտաբար ծանօթա-ցնել միայն, առանց քննադատական տեսութեանց պէտք տեսնելու: Ինչ ինչ կէտերու մէջ մեր գտղափարները կը հակառակին յօգուածագիրներու տեսութեանցը, բայց ամէն գրագէտ իր սեփական համոզումներուն համեմատ պիտի խօսի: Որբունին մեր մտքերուն ուղղութեանը վրայ ազդելու սահմանուած հատոր մը չէ որպէս զի քննա-դատութեան պարտաւորութիւնը անխուսափելի հարկ մը համարինք:

«Բարիին ու Գեղեցկին» եղբայրակցութիւնն է Որ-բունին: Բարին պիտի ծնի գեղեցկութենէն: Ամէն հայ որ կրիւրքուկէս ֆրանք վճարելով այդ պրակէն հաւ մը

կը ստանայ, կրնայ վստահ ըլլալ որ մեր որբերուն դժբաղ-
 դութեանց դարմանումին մէջ իր մասնակցութիւնը կ'ու-
 նենայ: Միևնոյն ատեն օգտակարութիւն մըն ալ իր անձին
 կ'ընծայէ, իր բնտանիքին, իր շուրջը գտնուողներուն:
 Գեղեցկասիրական հաճոյք մը վայելելու, եւ իրեններուն
 վայելել տալու պատեհութիւնը կ'ունենայ, պատեհութիւն
 որ յաճախ չեղբեր հայուն դէմը: Նոյն իսկ կարող չգիտցող
 հայն ալ կրնայ հոգեկան հաճոյքով հրճուիլ, երբ հայրե-
 նիքի յիշատակարանները այդ գեղագիտակին մէջէն իր
 աչքերը պարարեն:

Վերջացնելով մեր ամփոփումը, բռնեք թէ Որբուելին
 հրատարակիչ հայրերը այդ պրակին մէջ ոչ միայն բա-
 նաստեղծական երևակայութեան, եւ գեղեցկապաշտ ճա-
 շակի հաւաստիքները տուին, այլ սր աւելին է, Հայ-
 Եղբայրասիրութեան լայն մտքի մը ապացոյցը:

ՀԱՅՈՑ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՊՈԼԻՍ

Կ. Պոլսէն թէ մեզի և թէ եւրոպական մամուլին հա-
 սած տեղեկութիւնները Հայոց վիճակը ծանր կը նկա-
 րագրեն: Ոստիկանութեան նախարար Եւֆիզ պէյ դա-
 ժան, մոլեռանդ և ահեղապէս հայատեաց օտերիացի մըն
 է: Այսօր Պոլսոյ մէջ այնպիսի բացարձակ իշխանութիւն
 կը վայելէ որ կարելի է ըսել թէ մայրաքաղաքին տէրը
 ինքն է: Եւֆիզ պէյ առանց վարանումի կը յայտարարէ
 թէ Նազըմ փաշայի պաշտօնավարութեան թուականը հայ
 յեղափոխականներուն համար սկսեցար մը կրնայ համար-
 օւիլ, բայց թուլութեան, ներողամտութեան ժամանակ-
 ները վերջնապէս լսեցած են: Ոսկեզար մը այդ 1890-
 96 թուականը ուր Հիւսնի պէյ մը շնագայլի ակոսանե-
 րովը կը ջանար ամէն հայ պատառ պատառ ընել: Հի-
 մակ այդ վայրագը պէտք է եղեր անմեղ ոչխար մը նը-
 կատել բազդատմամբ արդի ոստիկանապետներուն:

Եւֆիզ պէյ որ եօթանասունի յաս է, տակաւին փա-
 շայութեան տիտղոսը չկրեր, ըղձանքներուն չէ հասած:
 Կ. Պոլիսը լուծեան մահաստանի մը վերածելով կը յու-
 օայ հասնիլ վէզիրութեան: Մուլթանին խոստում տուած
 էր շորս տարուան մէջ Պոլիսը մաքրել, որբել փաստակար
 ամէն տարրերէ: Յաջողութեան գլխաւոր պայմաններէն
 մէկը զբաժ էր կարելոր գումար մը իր տրամադրութեանը
 ներքե զնել արտասահմանի գործերուն յատկացնելու
 համար: Այդ գումարը թէեւ կ'ըտանայ բայց աւելի օգ-
 տակար կը համարի անոր խոշորիկէ մասը իր գրպանը
 փոխանցել քան թէ Եւրօպա: Եւֆիզ պէյ բաւական խե-
 ացի մարդ մըն է, ուստի գիտէ թէ զրոմով կարող չէ մեծ

գործ մը տեսնել արտասահմանի Հայոց մէջ: Վերջինս
 դէպքերը որոնք սեպտեմբերին տեղի ունեցան Պոլիսի
 բաւական մտատանջութիւն պատճառեցին ուստիկանու-
 թեան նախարարին, որ կարող չէ ըմբռնել թէ ինչպէս
 հանրածանօթ Հնչակեանները Պոլիս մտնելու եւ հոն գոր-
 ծելու կը յաջողին, հակառակ այն բերականաբ խոստու-
 թեանց որոնք կ'ը Պոլիս պաշարման վիճակի մէջ կը
 պահեն:

Շուարեալ մոլեգնութեանը մէջ Եւֆիզ պէյ բան-
 տերը կը լեցնէ հանդիպած հայերով: Բնապետները
 Հերովիլէսի օրերէն մինչեւ մեր ժամանակները հանճարիկ
 նոր գիւտ մը ըրած չեն վտանգաւոր մարդը նմոխալօրէն
 ձեռք ձգելու համար: Հրէաստանի թագաւորը «յերկ-
 մենից ցխոնարհ» կոտորել կուտար, յուսալով որ իրեն վախ
 ազդող մանուկը անոնց մէջ կը մոլորի, Հիմակ ալ բռն-
 նապետները տասնըհինգէն մինչեւ ութսունամենիները ի-
 րենց ճննկերը կ'անցնեն, յուսալով որ այդ կոյտին մէջ
 կրնան յեղափոխականներն ալ ծագրիլ:

Ոստիկանները իրենց պետին խորհուրդներուն թա-
 փանցած ըլլալով, եւ միանգամայն սանձարձակ իշխանու-
 թիւն վայելելով, ուզած հայերին կը բռնեն բանտը կը
 տանին կամ աքօթարձակը կը զրկեն, մերկ, անօթի վի-
 ճակի մէջ:

«Իր հայրենիքը», «Իր ծննդավայրը» աքսորուելու
 պարագան շատերու համար գրեթէ մահուան վճիռ մըն
 է, նաև ընտանիքներուն համար ալ: Քանի մը օրի-
 նակներ:

Հայ մը որ Եօզղատ ծնած, եւ տասը տարեկան եղած
 ատեն Պոլիս եկեր է և անկէ ետքը հոն մեծցեր, կարգուեր
 և ընտանիքի տէր եղած է, եւ այժմ 45 տարեկան է,
 Հիմա Եօզղատ աքօթուեցաւ: Այդ մարդուն յանցանքը
 այն է որ կոտորածի տարին Պոլկարիա անցած էր, բայց
 հոն չկարենալով ապրուտ մը հայթայթել կը վերա-
 դաճայ Պոլիս, կնոջը ու զաւակներուն հետ մէկտեղ
 Ոստիկանութիւնը հարցուփորձ մը ընելէ յետոյ, մարդուն
 կինն ու զաւակները Պոլիս կը պահեն իօկ զինքը շիտակ
 Եօզղատ կը զրկեն, ուր ոչ մէկ ծանօթ ունի: Ընտանիքն
 ալ հոս երեօի վրայ կը մնայ:

Քղեցի մը որ պատանեկութեանը Պոլիս եկած էր, հոն
 ամուսնացած եւ ընտանիքի տէր եղած է, վերջերս երկիրը
 ունեցած ամէն ինչ ծախելով իր պառաւ մայրն ալ Պոլիս
 բերել տուած էր, ու այլ եւս քնորովին պոլեցի եղած էր:
 Այս մարդը հայէ մը քանի մը ոսկի առնելիք ունէր և
 կուզէ. հայը լրտես է եղեր, եւ ահա ձերբակալել Վաթ-
 տայ նախկին ըղեցին որ շիփ շիտակ Քղի կը զըր-
 կուի. ասգին երեսի վրայ կը մնան, մայրը, կինը, զա-
 ւակները:

Վանեցի հայ մը որուն կինը եւ զաւակները օպան-
 նուած են կոտորածի տարին, նւ տունը տեղն ալ այրած
 է, եկած Պոլիս ապաստանած էր, եւ քանի մը մէջ պա-

հապանութիւն ընելով պատառ մը հաց կը ճարեր: Յան- կարծ կը բռնեն խեղճ ծերացիը եւ կը դրկեն Վան:

Այսպիսի օրմակներ հարիւրներով կարելի է ներք կայացնել:

Ոստիկանութեան նախարարը «աքորեալներու ճանապարհածախս» անունով մեծկակ ամական գումար մը կը ստանալք բայց աքորեալները այդ դրամէն քան մը չեն առներ: Անօթի ոստիկանները քրու վրայ որ գրամ գտնեն կը կորզին նաու տոմսագին անունով: Բագմաթիւ Վանեցի եւ Բաղէշցի հայեր սրունք վերջերս բանտերը լեցուած էին, իրենց վրայի արժէքաւոր իրեղենները, ինչպէս՝ ժամացոյց, մատանի եւ այլն, չգողցուելու համար աւանդապահ պաշտօնէութեան յանձնած են եղեր ստացագիր այ առնելով: Աքորման պահուն այդ իրեղենները տիրուրտանցը յանձնուած չեն, հակառակ անոնց բողոքներուն: Աւագակութեան այս գրութիւնը թիրք պաշտօնէութեան համար նորութիւն մը չէ:

Ոչ ոքին դերութիւն կը տրուի գոնէ իր ունեցած առնելիքները դանձելու, եւ եթէ խանութ ունի, զայն ծախել կամ մէկու մը յանձնել: Թշուառները անօթի ծարաւ, մերկ կը հասնին նաւահանգիստները, եւ ճարահատեալ կը դիմեն Հայոց առաջնորդարանին, չոր հացի մը չըզրամ խնդրելով: Տրապիզոնը որ ամենամեծ նաւահանգիստն է, ուր կը ժամանեն կարնեցիները, ֆրեցիները, վանցիները, Բաղէշցիները, Մշեցիները, Տրապիզոնը շատ նեղ կացութեան մէջ է: Առաջնորդարանը չգիտէր թէ որ մէկուն հասնի: Աստուրնէ մինչեւ իրիկուն ամէն օր «ի սէր Ասասւծոյ օգնութիւն մը, անօթի կը մեռնին» աղաղակները կը լսուին: Հագիլ թէ տասնական քսանական դուրուշ կարելի կ'ըլլայ հասցնել այդ թշուառներուն, որոնք ատեն մը այդ տեղի բանտը մնալէ յետոյ, ճամբայ կը հանուին դէպի իրենց ծննդավայրը: Ու ճանապարհին օրերով ու օրերով խոնաւ, աղտեղութեամբ լեցուն բանակը կը սպասեն: Էրզրումէն ճամբորդ մը եօթ օրէն Տրապիզոն կրնայ հասնիլ, իսկ աքորեալ մը բազմաւոր կը համարուի եթէ այդ ճամբան կարենայ 30-40 օրուան մէջ կտրել:

Աքորեալները տանող բերող ոստիկանները սրունք ամիսներով ամօականի երես տեսած չունին, կը շահագործեն աղքատ աքորեալները կրցածուն չափ: Այն ինչ նաւահանգատէ մը ճամբայ պիտի ելլեն ահա կը կայեն աքորեալներուն ձեռքերը. ջիջ մը յառաջանալէ յետոյ կը յայտարարեն որ «Եթէ այդպէս կայեալ յանձնուին մօտակայ պահականոցը, մինչեւ տեղերին կապեալ պիտի դրկուին» իսկ եթէ զիրենց «զոհացնեն» ան ատեն կայեքը կը քակուին ու այլ արձակ կը ճամբորդեն: Խեղճները կապկպուած ճամբորդութեան դիմանալու կարողութիւն չունենալով, կրնեն չեն ընել քանի մը դահեկան ձեռք կը ձգեն եւ կաշառելով ոստիկանները թեքանին ազատ կը պահեն: Բայց ահա միւս պահականոցէն

աւելի քան երեք ամաւր կը կապուին, եւ նորէն պէտք է վճարել:

Եւ Պոլսեցիներ կան որ այս վիճակը բաղաւորութիւն կը համարին, քան զի մայքաբաղաբը օարտափ տիրութեան ներքէն է ամէն օր:

ԹԻՒՐՔԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՍԸ

Լձնալու վրայ եղող տարուան վերջին ամիսները թիրքիա իր արտաքին քաղաքականութեանը մէջ անվերջով մնաց Պետութիւնները Չինաստան զբաղած ըլլալով Արեւելեան խնդիրը առ այժմ մոռցած ըլլալ կը թուին: Մակայն Երւսղը շատ հանգիստ չէ Ներքին գործերու կողմէն: Հայերը, Երիտասարդ-Թիրքերը, Մազկեղանցիները, Ալպանիացիները սուլթանին արդէն բաւական մտատանջութիւն կը պատճառէին, ու հիմակ քրեական վտանգ մըն այ կ'ընդհանրուի:

Ատենէ մը ի վեր է որ Լոնտոն ֆիւրտիստան անուանով թերթ մը կը հրատարակուի, Պետրղան պէլիսֆոսներէն Օսման փաշայի խմբագրութեամբ: Այդ թերթը բնականաբար չկրնար ո՛ր է է ներգործութիւն ունենալ ֆիւրտերուն վրայ, այն պարզ պատճառաւ որ կնարդալ գրել պետող քիւրտ չի գտնուիր: Օսման փաշայ իր ցեղին անունովը պանծալու դերութեան մէջ չըրտնուիր, և յանուն իր հայրենակիցներուն Երուսղայի դիմում ընելու հնարաւորութեանէն զօրկ է, թերթին անունովը տիտղոս մը կը ստեղծէ իրեն համար: Ամէն յեղափոխական թերթ կրնայ յեղափոխական ծրագրի մը և խորհուրդներու գոյութիւնը ենթադրել տալ: Դեկտեմբերին ֆիւրտիստանի խմբագիրը յանկարծ Անգլիոյ և Ֆրանսայի մամուլին մէջ աղմուկ յարուցանելու դերութիւններ ունեցաւ: Օսման փաշա կը ծանուցանէ թէ շահալիկայ տարին պիտի երթայ իր երկիրը, ուր մեծաքանակ զէնք մթերուած կը մնայ, և հոն իր ազգին զուխը անցնելով ֆիւրտերն ու Հայերը պիտի փրկէ թրքական բռնապետութենէն: Կ. Պոլսէն Սրահաարտի կը հեռագրուի որ այս լուրը եթէ ստող համարուի այն ատեն «գալլ եւ գառն ի միտին ճարակեցին»ը ճշմարտութեանց կարող պիտի անցնի:

Անշուշտ ամէն բանաւոր միտք կը խորհի թէ Երուսղայ նստող ապստամբապետ մը իր ծրագրները ի ձայն փողոյ եւ թմբի ամէն օւրեք հոշակելու պէտք չտեսէր: Գաղտնապահութիւնը անոնց իրականացմանը աւելի դերութիւն պիտի ընծայէր: Տարակոյս չի կայ թէ մեր ա-

պագայ « ազատարարը » այս տարրական ճշմարտութիւնը ըմբռնելու շափ գոնէ կարողութիւն ունի, ուստի եւ իր անխորհրդապահութիւնը թեթևամտութեան չենք կրնար վերագրել: Հաւանօրէն Օսման փաշա կը հեանելի այն քաղաքականութեան որմէն Երիտասարդ Թիւրքերը մեծապէս օգտուեցան, օգտակարութիւն մը որ սակայն Երլազը միշտ մտատանջութեան մէջ կը պահէ: Սպասելով նորագոյն տեղեկութեանց, առ այժմ բաւական կը համարինք զիտել տալ թէ ինչ որ ալ ըլլայ Օսման փաշայի յայտարարութիւններուն կարևորութեան աստիճանը, անոնք սուլթանին վրայ ազդելու ստիճանուած են: Ու հետեւանք ներք մեզի նպատաւոր չեն կրնար ըլլալ:

* * *

Սրահտարտի կ. Պոլսոյ թղթակիցը լիտ յիշատակելու հայ եւ քիւրտ համաձայնութեան մը լուրը, որուն նշանակութիւն մը ընծայել չթուիր, կ'աւելցնէ թէ աւելի հաւանական է որ Երիտասարդ Թիւրքերու եւ Հայոց միջև համերաշխութիւն մը հաստատուի: « Ինչ որ աւելի հաւանական է եւ ազատօրէն կը վիճուի, այն է թէ Հայ եւ Թիւրք ազատական քօմիթիներուն միջև համաձայնութիւն մը պիտի կարենայ գոյանալ: Ազատական Թիւրքերը շատ զայրացած են այն շարունակական դատավճիռներուն համար որոնցմով ի բացակայութեան մահուան կը դատապարտուին, այդինքն մշտնջենական բանտարկութեան, կալուածներու զրաման եւ ուրիշ պատիժներու, որոնք փոխանակ շարժումը խափանելու աւելի կը զրգոնն: Վերջին փախստականներէն մէկն է Միտհատ փաշայի թողը որ հետը կը տանի մեծ հօրը ինքնակենսագրութիւնը: »

Հայ յեղափոխականներու եւ Երիտասարդ Թիւրքերու համաձայնութեան մը խնդիրը նորութիւն մը չէ. 1896էն ի վեր միշտ յուզուած է, ինչպէս տեսնուեցաւ մեր նախորդ թուով հրատարակուած « Հայերը եւ Երիտասարդ Թիւրքերը » յօդուածին մէջ: Այս տարի Պոլիս գարձեալ լըր ջօրէն բանակցութիւններ կատարուեցան, առանց յաջող արդիւնքի մը սակայն: Ազատական Թիւրքերը երբ ուզեն իրականութեան հետ գործ ունենալ, և նկատողութեան աննել Թիւրքիոյ Հայոց պահանջումներուն արդարութիւնը, այն ատեն հաւանական է որ միաբան գործակցութեան մը ծրագիրը պատրաստուի: կ. Պոլսէն ստացած տեղեկութեանց համեմատ բանակցութիւնները այժմ աւելի քան երբեք լրջօրէն առաջ կը տարուին:

* * *

Մակեդոնիոյ կացութիւնը վերջերս ծանրացաւ, մասնաւորապէս մակեդոնական քօմիթիին գործունէութեամբը: Թիւրք կառավարութիւնը սակայն Պալքանեան պետու-

թեանց փոխադարձ շահերը իրարու դէմ հանելով առայժմ ապահով կը մնայ եւրոպական Թիւրքիոյ կողմէն: Թոյները մասնաւորապէս Մակեդոնական խնդրին մէջ շատ կը զիւրացնեն Երլազին ծրագիրներուն յաջողութիւնը: Հելէն բժիշկի մը Սալոնիկ սպանութիւնը առիթ մը եղաւ Աթէնքի կառավարութեան Դուէրը խիստ բողոքներ ֆտեղացնելու ընդդէմ Մակեդոնական քօմիթիին, եւ պահանջել անոր լուծումը: Յունական պահանջումները շատ ձեռնառու են Երլազին որ մեծապէս կ'օգտուի քրիստոնեայ պետութեան մը տրամադրութիւններէն, և կը հետամտի արդարացնել Մակեդոնիոյ մէջ գործուած խժշդութիւնները որոնք Հայաստանի աղէտներուն մէկ մասնաւորակարը կը ներկայացնեն:

Վիէնայէն Լոնտոն հասած հեռագրները Մակեդոնիոյ մէջ կոտորածի մը լուրը կը բերեն: Հայտուկ իտլամ մակնուանեալ մոլեռանդ մահմետական մը այդ ջարդը առաջ թերեր է, եւ կը պարծենայ եղեր թէ ինքն իր ձեռքովը 200 քրիստոնեայ սպաննած է:

Անկարագրելի են քրիստոնէից դէմ գործուած բարբարոսութիւնները: Պիթուշա՝ իտլամները քրիստոնեաները ծածուկուն վրայ հանելով խաչեր են, ու անոնց ձեռքերուն եւ ոտքերուն մէջ սրածայր փայտեր մխեր են: Կիները պղծեր ու յօշոտեր են, գաւակներն ալ ծնողներուն աչքին առջեջ կտոր ըրեր են:

Կրուսա իտլամները կիները պղծեր են անոնց ամուսիններուն, հայրերուն և եղբայրներուն աչքին առջեւ, ու յետոյ զանոնք իբր դերի հարկները տարած են: Էրիկմարդերը կամացուկ կամացուկ սպաններ են, հետզհետէ կտոր կտոր բրցնելով անոնց մարմինն միսերը: Տղաքները գետը նետեր են:

Իիպարից իտլամները քրիստոնեաները սպաննելէ առաջ անոնց սարմին միսերը կտոր կտոր վրանուն հաներ են:

Թոյն քահանայ մը պարկի մը մէջ դնելով ձենովիցա գետը նետեր են:

Միթրովիցայի սերպիական հիւպատոսը կը տեղեկագրէ թէ սպաննուած էրիկմարդերուն թիւը 1,100ի կը հասնի, իսկ անպատուած եւ հարէմը տարուած կիներունը 400:

Տեղական Թիւրք իշխանութիւնները բոլորովին անտարբեր հանդիսատեսներ եղած են այս կոտորածներուն:

Հայտուկ իտլամի մասին հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդուին:

Այս գազանը Ալպանիոյ մէջ ընդարձակ կտուածնեք ունի եղեր, որոնք ամէնքն ալ, իր շոյլ կենցաղավարութեամբը հայ վաշխառուներու ձեռքն են անցած: (Միազ տեղեկութիւն մը ըլլալու է, Ալպանիոյ մէջ ինչ բան ունի հայ վաշխառուն):

Հայտուկը երզում ըրած է վրէժը լուծել այն ցեղէն որ

զինքը իր կալուածներէն զրկած է. ու հիմակ իր թշնամու-
թիւնը բոլոր բրիտանոնէից կը տարածէ:

Իր գլուխը ժողովեց զժողոհներու, իսլամ մոլեթանդներ,
բու, գործով աւազակներու վոհմակ մը, եւ սկսաւ Գրիս-
տոնեաններու բնակած քաղաքներն ու գեղերը յարձակիլ
եւ զանոնք աւրել, աւրչտկել թալանել, ու բնակիչ-
ները ջարդել:

Հայասուկ երկու տարիէ ի վեր է որ իր սերպարծու-
թիւնները առաջ կը տանի, բայց թիւրք իշխանութիւնը
զանոնք անգիտանալ կը ձեռնէ. ինչ ինչ պարագաներու
մէջ Հայասուկ քաղաքներու թիւններ ալ ստացած է կառա-
վարութենէն:

Վերջին տեղեկութեանց նայելով Հայասուկի աւազա-
կախութեանը իրենց եղբնագործութիւնները հիմակ Բրիտ-
անոնի եւ Նովի Պազարի վիլայէթներուն մէջ առաջ կը
տանին. Գրիստոնեանները կը փախչին կ'ապաստանին Սեր-
պիոյ եւ Գարատաղի սահմանները:

Մակեդոնիոյ ընդհանուր կացութեան մասին Սելա-
նիկի եւ Գոսովայի վալիներուն զրկած տեղեկագիրները
շատ մտահոգութիւն կը պատճառեն սուլթանին, որ վեր-
ջերու մեծաքանակ ուղարկութեանց ու ՁԷ լերան թնդանօթ
Սելանիկի զրկեց:

Լաւատեղեակ տղաբիւրներէ օակայն կը հազտատուի
թէ այս ձեռն Մակեդոնիոյ մէջ ո'ւ է ծանր խնդիր չի
կրնար ծագիլ, վասն զի շատ գէշ է ելմտական վիճակը
պալքանեան երեք պետութեանց որոնք այնքան մեծամեծ
շահեր ունին Մակեդոնական խնդրին մէջ:

Սուլթանը սակայն պալքանեան պետութեանց դեմպա-
տերազմի յատակագիծ մը պատրաստելուտայ. Գերմանա-
ցի համբաւաւոր Փոն Տէր Կոյց փաշա ուղարկեալ 1886ին
պալքանեան պետութեանց դէմ պատերազմի յատակագիծ
մը պատրաստած էր, եւ Հելլէն-թիւրք պատերազմը այդ
յատակագիծին հիմերուն վրայ մղուեցաւ: Սակայն այդ
յատակագիծը այլ ևս անպէտ դարձած է զանազան պա-
րագաներու բերմամբ, ուստի եւ նորի մը պէտքը
տեսնուեր է:

Այսպէս ահա թիւրքիոյ թէ ասիական եւ թէ եւրո-
պական մեծ նահանգները, ինչպէս նաև Մայրաքաղաքը
միշտ սուլթանը տարապայման մտադանջութեան մէջ կը
պահեն: Չինաստանի խնդրին վախճանը հաւանօրէն նո-
րանոր յեղաշրջումներու թուական մը պիտի բանայ Ա-
րևելքի համար:

ՌՈՒՍԻՈՅ ՆԱՅԵՐԸ

Գրիգոր Չանչեան թէև վախճանած բայց իր որբա-
խնամ գործը կը շարունակուի: Ռուսաստանի Հայոց
մէջ ի նպաստ Հայաստանի որբանոցներուն հանգանա-
կութիւնները կը շարունակուին, և արդիւնքը կը զրկուի
Ռուս. Վիետեմ. լրագրին որուն աշխատակիցն էր հան-
գուցեալ Հայ հրապարակագիրը:

Չանչեանի մարդասիրական ոգին ոչ միայն թիւրքի
Հայոց այլ և Ռուսիոյ Հայոց ալ մեծ բարիք մը պիտի
պարգեւէ: Բեղրպուրի Հայերը մասնախումբ մը կազմած
են դրամագրութի մը հաւաքելով Կովկասի զանազան կող-
մերը ժողովրդական գրագրարաններ հիմնելու համար, ի
յիշատակ Չանչեանի:

Այդպիսի հաստատութիւնները մեծապէս կը նպաս-
տեն ժողովրդին զարգացմանն ու բարոյականացմանը:

Ռուսիոյ Հայերը ննջեցեալի մը յիշատակը յարգե-
լու լաւագոյն միջոցը երբ մտաւոր անօթիներու սնունդ
տալու մէջ կը փնտոնեն, կը կտրծենք թէ մեր հայրենի կը-
րօնական աւանդութեանց կը հպատակին, բնաշրջումի
օրէնքով սակայն: Ննջեցեալի մը հոգիին համար մատաղ
ընելու աւանդութիւնը զեռ Հայաստան կենդանի է: Մա-
տաղը բարեգործութիւն մըն է, որով աղքատները կը կե-
րակուին եւ կ'ուրախանան: Ժողովուրդը կը հաւատար-
մեանողի մը հոգին կը հրծուի երբ իր սիրելիները բարիք
մը կը գործեն իր յիշատակին համար: Հիմակ փոխա-
նակ նիւթական անօթութեան, բարոյական անօթութիւնն
է որ յագեցնելու ձգտում կը տիրէ. ձգտում մը որ ան-
շուշտ աւելի «հոգեհաճոյ» գործ մը կրնայ համարուիլ
քան թէ պատառ մը միսի եւ հացի բաշխում:

* * *

Կարգ մը ռուս լրագիրներ, որոնց գլուխն է Նովոյե
Վրեմիա ցեղամուլ թերթը, միշտ թշնամութեամբ վե-
րաբերուած են զէպի հայազգը. բայց ատոնց զէմը կը
տեսնուի ուրիշ մամուլ մը, ազնիւ ու մարգասէր, որ Հայ-
կական գատը իր պաշտպանութեանը ներքեւ առած է:
Այդ մամուլին գլխաւորներկայացուցիչներէն է Բեղրպուր-
կի Նովոսրի մեծ օրաթերթը, որ յաջորդած է Չնուած
համբաւաւոր Կոլոսին: Վերջերս Բեղրպուրի Նովոսրիի
խմբագիր Պ. Նոսովիչի երեսուն տարուան զրական գոր-
ծունէութեան յօրելեանը կատարուեցաւ. այս ասթիւ
Ռուսիոյ ամէն կողմէն յորելեարին շնորհաւորական հե-
ռագիրներ եւ ուղերձներ զրկուեցան: Մոսկուայի Հայերը
եւ բարեմաղթութեանց հեռագիր մը զրկած են Պ. Նո-
սովիչի, որուն մէջ կ'ըսեն նաև:

«Մենք շատնց է արդէն առիթ ենք ունեցած ինա-
հատել այն լայն յառաջողէմ, եւ մարդասիրական հայ-
եացքները որոնք Նովոսրի լրագրի օրէնակներուն մէջ ար-

ձագանգ կը գտնեն: Եւփոսթին միշտ պատրաստ է ախոյ-
 քան կանգնիլ արդար գործի: Պաշտպան հանդիսանալ
 անոնց որ կը տանջուին, հակառակ է ամէն անհամբե-
 րողութեան, նեղ հայեացքներու, ազգայնամուլութեան.
 արդարութեամբ կը վերաբերուի գէպի բոլոր ցեղերը եւ
 ժողովուրդները: Մենք մասնաւորապէս երբեք չենք մոռ-
 նար ալն համակրութիւնը որով ձեր թերթը կը վերա-
 բերուի մեզի՝ հայերու, յանձին թիւրքաց Հայաստանի
 քրիստոնեայ, ազգաբնակչութեան, որոնք ցուց անկաշառ
 կերպով ձեր պաշտպանութեան տակ աօրէք զազանային
 կոտորածներու ժամանակ, աշխատելով սուսաց հասար-
 ակութեան ուշադրութիւնը հայ ժողովրդին կրած տան-
 ջանքներուն վրայ զարձնել: Ընդունեցէք ուրեմն, մեծար-
 գոյ Օսիպ Կոնստանտինովիչ, մեր անկեղծ շնորհակա-
 լութիւնները այդ մարդասէր եւ լոճաւոր վարժունքին հա-
 մար զկպի հայերին վիճակը: Եւ հաւատացէք որ օրտանց
 ձեզի կը մաղթենք զեռ երկար տարիներ հասարակու-
 թեան համար, մամուլի բարօրութեան համար, իօկական
 զարգացման համար անցուլ եռանդով և թարմ ուժերով
 աշխատիլ, համբերողութեան և մարդասիրութեան զը-
 բօշին տակ:»

Մենք ալ ի սրտէ՛ կը մասնակցինք այդ բարեմաղթու-
 թեան:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ. Անգլիական մամուլին կը հետազոտուի
 քէ Հայաստանի վիճակը սոսկալի է: Պոլիս կը վախճուի
 քէ նոր ջարդեր աեղի ունեցած ըլլալու եւ, վասն զի
 Դոնար Պատրիարքարանին ազգարարագիր մը դրկած է
 ժանոցանելով որ վանի եւ Մոնչի կողմերը յեղափոխա-
 կաններ կը գտնուին եղեր: Յայտնի է քէ ամէն անգամ
 որ կոտորած մը տեղի ունենայ, կամ ասուք կամ ետքը
 հայ յեղափոխականներու ներկայութեան կը ժանոցուի
 քիտք իշխանութեան կողմէն: Բաղեղի ասուցնորդը ու-
 տիկանական հսկողութեան ներքեւ Պոլիս կը բերուի:

ՏՈՒԳՆԻՔ, Անգլիական կառավարութեան ար սկսած
 է նեղը ղեկը Դոնար գանձելու համար կոտորածներու մի-
 ջոցին անգլիացիներու կրած կորուստին իբր փոխարի-
 նութեան պահանջուած գումարը: Անգլիական կառավա-
 րութեան կը կարծէ քէ Թիւրքիա Աւերիկայի պահան-
 ջումներուն զոհացում տուած է, մարտանաօի մը զնու-
 մին միջոցաւ վճարելով Միացեալ Նահանգներու ուղած
 գումարը:

ՎԱՐՉՈՒՄՆ . ԱՍՐԲԵՐ. Պոլիս սատրագամին և քա-

ղաքապետին միշտ անցած ցեպը մը իբր Թիւրքիոյ վաճ-
 չական քարքերու նմոյշ մը կը պատուաբ անգլիական
 մամուլին սեղ:

Մքաւպոյնի փողոցներուն յոսատորութեան Պեթի
 գացի բնկերութեան մը կ'ընէ: Եւ քաղապետութեանը տ-
 մէն ամիս վճարումները կ'ընէ, ըստ պայմանադրութեան:
 Սակայն ինչպէս սովորութեան է, վճարումները կը քիզ-
 ոսին կը մնան: Ընկերութեան ներկայացուցիչը վերջերս
 օր մը ա'չ համբերութեանը հատնելով, շիտակ քաղաքապետ
 Բրտվան փաշային կը դիմէ եւ կը յայտարարէ որ երբ
 պարտքերը չվճարուին ինքն ալ պիտի դադարեցնէ Կ.
 Պոլիսը կազով յոսատորութեան ժառանգութեանը: Բրտվան
 փաշա, կամ ստակ չունէր պատրաստ, կամ երբ ունէր իսկ
 չէր ուզեր իր սնտուկը դատարկացնել, ուստի կը բռնէ
 պաշտօնեայ մը շոտով սատրագամին կը դրկէ: Պաշտօն-
 եան կ'սկսի եղելութեանը պատմել, իսկ սատրագամը աչ-
 քերը կը խփէ ու կը քնակայ ասանց պատասխանելու:

Թաղապետական քարտուղարը վերադասուելով կ'ի-
 մացնէ քէ սատրագամը ո' եւ է պատասխան չէ հոռատ:
 Բրտվան փաշա շոտելը Երջոց կ'ասնէ. կ'իմացնէ որ երբ
 յանկարծ զիչերը Պոլիս մտրի մէջ մնայ, յեղափոխութեան
 մը պիտի պայքի, եւ քէ ինք այդ վտանգը նախատեսելով
 սատրագամին ուշադրութեանը հրահարած է, բայց անիկայ
 քնացեր է ասանց պատասխան մը տալու: Եւ անա սատ-
 րագամը պալատ կը բերուի, ուր իրեն կը հարցնեն քէ ին-
 չո՞ւ: Յեղափոխութեան սպանալիքը ըսած պահուն հան-
 դարտ կը քնակար: «Իրաւ է որ աչքերս փակած էի, կը
 պատասխանէ իմիչը Բիթար փաշա, բայց պաշտօնեան րո-
 լոր ըսածները կը լսէի: Համկցայ քէ քաղաքապետութեան
 մէկ վարպետութեան է որով իր պարտքերը ուրիշին վը-
 րայ նետել կոչգի. ըսելիք մը չունէի ու չպատասխանեցի:»

Ասոր վրայ Բրտվան փաշա պալատը կը կանչուի ու
 յանդիմանութեան կը ըստ որ քաղաքապետութեան պարտքն
 է, ինք վճարելու է զայն, եւ քէ ատուկ երևակայական
 վտանգներու եկրադրութեանը Դոնար՝ ու Պաշտօնը տակ-
 նուստրայ լընէ:

ՀԱՍՏԵ ԵՒ ԲԱՍՆԵՐԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին
 եւ 15ին: Բաժնեզինն է Եւրոպայի համար տարեկան 10
 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2
 ու վեցամսեայ 1 տուար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեզին
 դրկել ա՞՞

L. FRANK,
 27, CHESTERTON ROAD,
 (ENGLAND) LONDON, W.